



Ոգի-Նաիրի

Vogi-Nairi

Harkaitz Cano

Otso zintzoa, otso gaiztoa

Poema antologia

Kristine Kocharyanek armenierara itzulita

Harkaitz Cano

Good Wolf, Bad Wolf

Poems

Translated into Armenian

by Christine Kocharyan

Vogi-Nairi, Yerevan 2025

ՀԱՐԿԱՅԾ ԿԱՆՈ

**ԲԱՐԻ ԳԱՅԼ,
ՉԱՐ ԳԱՅԼ**

Բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Քրիստինե ՔՈՉԱՐՅԱՆԻ

Երևան 2025

ՀՏԴ 821.361-1 Կանոն
ԳՄԴ 84(4Իսպ=750)-5
Կ 210

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Կանոն Հարկայծ

Կ 210 **Բարի գայլ, չար գայլ:** Բանաստեղծություններ / Հ. Կանոն:
Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Ք. Քոչարյանի.- Եր.: «Ոգի-Նաիրի» գեղարվեստի
կենտրոն, 2025.- 104 էջ:

Հարկայծ Կանոնի պոեզիան իր ուրույն տեղն է գրավում Բասկերի Երկրի արդի պոետական համապատկերում: Նրա անակնկալ մտազննումները, հումորը, հոգեբանական նուրբ բացահայտումներն ու ծավալվող փոխաբերություններն ուրվագծում են բանաստեղծական մի գրավիչ աշխարհ, ուր ընթերցողը գտնում է իրեն հոգեհարազատ բազում մշաններ ու երեւոյթներ. դրանք օգնում են առավել խորությամբ ու առարկայորեն ընկալել կյանքը, այլեւ՝ գեղագիտական բավականություն ստանալ: Հ.Կանոն բանաստեղծում է Եվրոպայի հին լեզուներից մեկով՝ բասկերենով, որը կարող է կրկնակի ուշագրավ լինել հայ ընթերցողների համար՝ լեզվապատմական գուգահեռների եւ հոգեւոր մերձության տեսանկյունից:

Funding for the translation and publication of this book has been provided by the Etxepare Basque Institute (translated into armenian).



**ETXEPARE
EUSKAL
INSTITUTUA**

Գրքի թարգմանության եւ հրատարակության ֆինանսավորումը տրամադրել է Բասկյան Etxepare ինստիտուտը

ISBN 978-9939-9344-1-9

ՀՏԴ 821.361-1 Կանոն
ԳՄԴ 84(4Իսպ=750)-5

© Harkaitz Cano 2020

© «Ոգի-Նաիրի»(թարգմանության համար), 2025

Ինքնադիմանկար

Ես ապրել եմ ձիարշավարանի մոտ,
բայց երբեք չեմ ձիավարել:
Կարող եմ լինել անսովոր առատաձեռն՝
դենքով կիսվել քրոջս հետ,
արժեքներով՝ ընկերուհուս:

Հայրս լավ գրող էր,
բայց երազում էր լինել պրոֆեսիոնալ գրող,
մինչդեռ ես պրոֆեսիոնալ գրող եմ,
բայց երազում եմ լինել լավ գրող:

Ես գիտեմ, որ գրող եմ,
քանի որ անկոտրում մարդուն ասում եմ՝
«իրական կերպար է»,
քանի որ հաճախ եմ կրկնում
«հանկարծ» բառը:

Եվ բոլոր հպարտ մարդկանց նման
գիտեմ՝ ինչպես ընդունել թերություններս,
քանզի առաջինն եմ
նկատում դրանք:

Հեշտությամբ համոզում եմ,
դժվարությամբ՝ հեռանում տնից:

Հարկայծ ԿԱՆՈ

Դաջվածքներ չունեն,
որովհետև մայրս ատում էր դրանք
և այն մարդկանց, ովքեր ամռանը սև են հագնում
ու ձմռանն՝ արևային ակնոցներ կրում:

Ես երջանիկ եմ այն վայրերում,
որտեղ խոսելն անհարկի
կամ անհնար է համարվում
(օրինակ՝ ջրի տակ):

Աշխարհում ամենաշատն ինձ դուր է գալիս,
երբ առավոտյան լողանում եմ,
իսկ կեսօրին՝
ընթերցում:

Գրականությունն այն միակ բանն է,
որի համար ես կծախսեմ
իմ վերջին կոպեկը:

Սարսուռների մեկնաբան

Ես սովորական մարդ էի:

Մի անգամ իմ շենքի մուտքի մոտ ձեռքս մեկնեցի

իմանալու՝ անձրևն է գալիս, թե՞ ոչ,

մի կիև ձեռքիս մեջ կոպեկներ դրեց՝

կարծելով թշվառ մի մուրացկան եմ:

Նա փոխեց կյանքս՝ առանց հասկանալու:

Ես այդ պահից ի վեր ապրում եմ փողոցում:

Սովարաթղթե արկղերը կկարոտեն ինձ,

երբ ես հեռանամ:

Հազիվ հեշտությամբ կկրեի ծերության ծանրությունը,

եթե տարիներն ինձ չսովորեցնեին՝ ոնց մեկնաբանել

ինձ շրջապատող սարսուռների մեջ գտնվող

աշխարհը:

Քամուց ցանկապատին զարնվող

թերթի կտորը:

Լցված կոկորդի հառաչանքը:

Վոլֆրամի թելի¹ կտրվելու նախազգուշացումը:

Պարկինսոնի հիվանդությունը² հոնքերի

արտահայտությամբ

ավետող մի աղջիկ, ձեռքերը սեղմած,

հայացքը հատել է իր հետ գնացքում խոսող տղային:

Տղան անհեթեթ խոսում է, ու քանզի աղջիկը

սիրում է նրան,

ձևացնում է, թե ուշադիր լսում է:

Նրանց դողդոջուն մատները տենչում են իրար:

Որ չթռչեն զատ-զատ,

աղջիկը պետք է վերահսկի մատները

եւ ձիրան ծնկները խեղկատակ տղայի,-

պատկերի անհերքելի պաշարում կա

նրա սեւ աչքերում:

Պատանիները ելնում են կայարանից, որը փորձում էր

թաքցնել զգայունությունն իր ամեն մի շարժման

ու տատանման մեջ,-

այժմ միայն գնացքն է, որ սարսռում է:

1. վոլֆրամի թել /wolfram/ - Գիտելիքների բազա և հաշվողական ալգորիթմների շարք (անգլ.՝ հաշվողական գիտելիքների շարժիչ), հարց-պատասխան համակարգ: Ծրագրի հիմնադիր Սթիվեն Վոլֆրամը բացատրում է, որ այն կկարողանա թարգմանել բնական լեզվի հարցերը համակարգիչների համար հասկանալի ձևաչափով՝ թույլ տալով հաշվարկներ և որոնումներ կատարել՝ օգտագործելով ալգորիթմների միլիոնավոր տողեր:

2. պարկինսոնի հիվանդություն (ՊՀ) - Գլխավորապես կենտրոնական նյարդային համակարգի շարժողական (մոտոր) գործառույթը խաթարող դեգեներատիվ խանգարում:

Մարդ մարդկանց մեջ

Այս երկրի մարդիկ
որտեղի՞ց են քաղում լարվածությունը,-
այն խթանիչ ուժը,
որ թրթռում է նրանց աչքերում,
արցունք չի բերում:
Որտե՞ղ են գտնում նման խթանիչներ:
Զիավարության մրցումներում՝, ֆուտբոլի թիմերում՝,
թե՞ զառի նետումներում՝ «օձեր» խաղի մեջ,
կամ՝ հարսանիքներում՝ և կնունքներում՝,
ծանր կամ թեթև հիվանդությունների
հնարավոր, անհնարին բուժման պատմությունում:
Մի՞թե բամբասանքով լի ամսագրերի
գրականությունը
հանգստացնում է նրանց կրքերի վայրագ հրեշին:
Հիմա նրանք գոհ են, որ հանդիսատես են, իսկ
ե՞րբ երեսպատեցին ծաղրածու լինելու իրենց կոչումը
և որտե՞ղ թաղեցին:
Մի՞թե նրանց պես ես էլ ունեի հնարավորություն
օրերիս տակ երջանիկ ստորագրելու, որ
քիչ տառապանք ու վնաս կրեի:
Իսկ որտե՞ղ պետք է ստորագրեի:
Ի՞նչն ինձ խանգարեց ընդունելու
իրերի և օրերի շահավետ մեխանիկան:

Շիրք առանց կնիքի պայմանագիրն այդ
աննկատ անցավ իմ դռան կողքով,
այդ ձամփորդող սատանան՝
«ապրիլների» հավաքածուով,
և խոստացավ, որ ձմեռը կուշանա:
Իսկ ի՞նչն է ինձ խանգարում, եթե ոչ հպարտությունը,
մարդկանց մեջ մարդ լինել:

Սարասն¹, 1993

Այստեղ՝ Սարասնոյում նույնպէս սովորություն
ունեինք բալ ուտելու:

Այստեղ ևս կային չորս ձեռք ու չորս բալ,
ուր երազ ու տասնվեցամյա աղջիկ
ու մեր հիշողությունը մխրձված ծուխ
այն կեսօրներին, երբ անձրևն անհնար էր դարձնում
քվորումը:

Բայց այսօր տասնվեցամյա թխահեր աղջիկը
կորցրել է իր երրորդ ու չորրորդ ձեռքերը:
Նա հոգ է տանում ծնողներից խլած
երեխաների մասին՝

հատիկ առ հատիկ քաղված բալերից
յուրաքանչյուրին մեկական տալով:
Կապույտ հագից
խեղված կրծքավանդակների պատճառով
նրանք չեն կարողանում պարանով խաղալ:
Քարերն աչքեր չունեն, երբեմն՝ մարդիկ ևս:
Սառցապատ թերթերին մահն
առանց կաղալու անջնջելի հետք է թողնում:
«Իսկ ի՞նչ էիք արել այդքան երկար,
մինչ հյուծված շները կաղկանձում էին», -
հարցրեց հեռվից եկած լրագրողը, ով
ողջ կյանքում բալ չէր համտեսել:

«Մենք սկսեցինք երգել»:

«Եվ այն գիշերները, երբ ռումբերը ցնցում էին
նավաբեկված տախտակե աստիճանները,
այն գիշերները, երբ արյան գետերը հոսում էին
մթնշաղից թափվող կաթիլներից արագ,
ներխուժում դռների տակից և թրջում ամեն ինչ,
այդ անթռչուն ու սսկված ձյուղերով գիշերները
ձանապարհ են բացում դեպի հոգու բարձր
աղբակույտները,
իսկ ի՞նչ էիք անում դուք դժոխքով լցված
այդ գիշերներին,
երբ ջրհեղեղները մահվան ցանկապատի մոտ
փակում էին աչքերը»:

Թխահեր աղջիկը ցած էր նայում
(քարերն աչքեր չունեն,
երբեմն՝ մարդիկ ևս),
հետո արցունքոտ աչքերով՝ դեպի հորիզոն,
որտեղ երեխայի անմեղ մատը թաթախվել էր
հասած բալի մեջ
երկաթկայանի պահասենյակի պատուհանի դեմ:

Հարցը չափազանց երկար էր, ծծմբի պահանջները՝
նույնպես:

«Այդպիսի գիշերներին մենք ավելի
բարձր էինք երգում»:

*1. Սարաևո (Sarajevo) - Բոսնիա և Հերցեգովինայի Դաշնության
մայրաքաղաքը*

Նոր կայարան

Նրանք ստեղծեցին նոր կայարան մեր ջահելության
մասունքներից:

Գնացքները ժամանում են լեփ-լեցուն՝

չչալով ու մխալով:

Երկաթգծի երկայնքով փոված քարերը

հուշարձաններ են դարձել նախկին գժանոցի տեղում:

Հարթակներից տարօրինակ հոտ է գալիս:

Վրդովմունքի շինծու ատամներից սարքված

երկաթգծերը

ավելի անվերջ են, քան խենթությունը:

Մեր կյանքը ոչ մի այլ բանով նման չէ

ձամփորդությանը,

բացի բեռներով լի մեքենաներից:

Խորտակված ձամպրուկները ծաղկել են ջրի երեսին:

Մեր մահը ոչ մի այլ բանով նման չէ

ձամփորդությանը,

բացի միտումնավոր մոռացված ձամպրուկներից:

Ես կարող էի շատ բան ասել, բայց միայն կասեմ,

որ երեկոներին ծովը ցավակիր ու ցիտրուսային մրգի

տեսք է առնում:

Ծխի ազդանշաններ

Որտեղի՞ց է գալիս այս ծուխը:

Այս քաղաքում, մահձակալները վերացնելուց հետո,
մարդիկ սիրով զբաղվում են

խոհանոցի տաքուկ վառարաններում,

իսկ ապրանքները փակ պատուհաններից

ներս են սողոսկում մշուշի տեսքով:

Ես հեռանում եմ քո ձայնից, որ սուրձս չսառչի:

Ժայռերի միջից ժայթքում է լուրջությունը, ես

օրն օծվում է խաղաղությամբ:

Օրվա առաջին բնակիչները, թղթե տոպրակներում
կրելով այրված դեմքեր,

անվերջ նյարդայնացած քայլում են մայթերով,

քանգի դատարկված են թատրոնների ու շշերի պես:

Մարդիկ շտապում են, կարծես ինչ-որ մեկը գողացել է
գիշերն իր բոլոր լուսակիրներով:

Լուսաբացը կաղ մարդու հետք է՝

թաքնված կյանքի ձյունածածկ մայթի տակ:

Որտեղի՞ց է գալիս ծուխն այս:

Ոչ ոք չգիտի:

Այս քաղաքում մարդիկ սիրով զբաղվում են

խոհանոցի սառչող վառարաններում,

քանգի մահձակալները վերացվել էին:

Տանիքների վրա աշխատող մարդիկ

Զոկիին

Նրանք այն մարդիկ են, որոնց չեք ձանաչում,
չնայած նրանց անունները կարող են լինել
ձեր հասցեագրքում:
Նրանց անուններն ու հեռախոսահամարներն
անծանոթ են ձեզ,
չնայած փորձում եք հիշել նրանց:
Տանիքների վրա աշխատող մարդիկ երբեք
չեն խոստովանի,
որ իրենց կարծիքով
երկինքը կապույտ չէ,
որ կարող են լսել սամուրայական աստղերով
դրոշների ծփանքը,
երբ դեմ առ դեմ հանդիպում են քամուն:
Տանիքների վրա աշխատող մարդիկ գիտեն
իսկական գլխապտույտը:
Տանիքների վրա աշխատող մարդիկ չեն կարող
աշխատել գիշերային ակումբում կամ սրճարանում:
Նրանց դեմքի այն արտահայտությունից, որ ահա
սալիկը կընկնի,
կարելի է ենթադրել, որ գուցե նրանք
անվստահ տանգոյի ուսուցիչներ են եղել
մեկ այլ կյանքի օրոք, մոտ անցյալում:

Տանիքների վրա աշխատող մարդիկ միշտ
խուսափում են
պիկ ժամերից ու ամբոխներից,
ասես ամբոխ ու ավտոբուս, լեյկեմիայի հոտն ու
«չափազանց շատ» արտահայտությունն
այնքան է գերակշռում, որ
կարող է աշխարհը տիղմի մեջ թաղել:
Տանիքների վրա աշխատող մարդիկ նույնիսկ
չեն վստահում
առավոտյան ժամը հինգի դատարկ փողոցներին,
և այն հազվագյուտ պահերին, երբ նրանք
դուրս են գալիս,
նախքան հետիոտնային անցումով փողոցը հատելը,
նրանք հապաղում են մայթին,
մի ոտքով փորձում են ասֆալտի կարծրությունը,
հանդվելու՝ արդյո՞ք այս սառցակալած սև գետը
չի ձաքի նրանց ոտքերի տակ:

Կոնի կղզու¹ մղձավանջը

Քո գինու մեջ ինչ-որ բան են լցրել,
երբ դու նայում էիր նրան:

Ձյունաձերմակ տան մեջ՝ լուսավոր ու մեծ,
փակվել ես
կլաուստրոֆոբիա² առաջացնող լոգասենյակում.
փորձում ես մաքրել շապիկիդ արյունը ծորակի տակ -
լվանում ես, մզում, կրկին ու կրկին:
Մատներիդ վրա վերքեր են հայտնվել,
բայց ցավ չկա:

Ոչ մի ցավ՝ որևիցե տեղ:
Կողերդ իզուր ես կրկին հաշվում.
բոլորը տեղում չեն՝ քիչ են մնացել:

Իսկ ո՞նց այդպես եղավ: Շապիկդ դեռ արյունոտ է:
Այն մաքրելու միջոց այլևս չկա:

Լուսաբացը գտավ քեզ
Կոնի կղզու ծառուղում,-
հաշմանդամների ամբոխը շփոթահար թափվել է
լողափում կանգնած տարօրինակ
լաստանավի շուրջ:

Իսկ դու՞:
Դու էյֆորիայի մեջ ես՝ ողջ ես արթնացել:

Մեր կյանքի լավագույն տարիները

Մի կողմ դրեք ձշմարտությունը:

Սուտն առաջ տարեք:

Մի բուռ ինտուիցիա ցանեք:

Թող քաջությունը ցած գլորվի:

Կուրորեն հավատացեք սիրուն:

Կասկածին տեղ մի տվեք:

Հարբեք, ծխեք, շտապ թոթափեք զայրույթը:

Եվ ոչինչ չի պայթի ձեր ձեռքերում:

Փետուրե մահձակալ

Գուցե նաև ձիշտ չէ, բայց ասում են՝
սպանվել է վերջին սուրհանդակը,
հրկիզվել՝ բոլոր նամակներն ու դպրոցները:
Ընդհատուն ծխի ու փակ պատուհանների
օրերն են մոտենում:
«Գուցե սա իմ վերջին թռիչքն է ազատության մեջ», -
մտածում է նա:
«Թեպետ էրոտիզմը գեղեցիկ է հնչում», -
կրկին մտածում է նա:
Նա վառում է ծխախոտն ու հարցնում.
«Որքան ես մնալու»:
Կինը պատասխանում է.
«Այնքան, որքան թույլ կտան հիշողությունները»:
Հետո յուրաքանչյուրն իր կողմն է շրջվում.
լարվածությունը միայն սավանի մեջ չէ,
այլ, երբ մի բան, որ երկաթե հիմք չունի,
ձռռում է
ներսից:
Այս օթևանը, անշուշտ,
անառողջ, հակասանիտարական և
վտանգավոր շենքերից է,
և, կարծես, նույնիսկ ներքնակներն այստեղ
լի են սատակած թռչուններով:

Գնչուները

Այդ գնչուները անդադար
պարում էին տների հարթ տանիքներին,
քանզի, անհասկանալիորեն,
տներն այդ աստիճաններ չունեին,
նույնիսկ՝ տանիք տանող:

Գնչուներն այդ ապրում էին Ուրբարտի
հարևանությանը՝
հեծանիվների գերեզմանոցի հեռավոր մի անկյունում,
ցաքուցրիվ, տների թուլակազմ կմախքների միջև:
Տարիներ շարունակ տներն այդ կանգնած էին
կիսակառույց՝
հանց ծոված կողերով կմախքներ,
հանց զրահ առանց թոքերի,
կամ բետոնե փայտամած՝
նարնջագույն շապիկի մեջ:
Նրանք գիշերները խարույկ էին վառում,
հագուստի քրտնահոտն
ու վառվող անվաղողերի հոտը հասնում էին քաղաք:
Մի ընկեր մի անգամ մեզ ասաց,
որ գնչուների արյունը սև է,
քանզի նրանք սերում են մարդակերներից:

Ծածանվող լեզուներն ասում էին,
որ իրենք հարյուրավոր են,

Եւ որ քաղաքապետը նրանց քաղաք էր բերել
ընտրություններում կրկին հաղթելու համար՝
ձայների դիմաց ապաստան առաջարկելով:

Նրանք ծննդաբերում էին հեծանիվների
գերեզմանոցի հեռավոր մի անկյունում,
նրանք այնտեղ մոխրի մեջ թաղում էին
գիշերը դանակահարված մարդկանց աձյունները,
աշխարհից թաքնվում էին երազների
և շների հաչոցների մեջ:

Մենք վախենում էինք նրանցից:

Նրանք գողանում էին մեր հեծանիվներն ու
ներկում մարդակերի սիրած սև գույնով,
որպեսզի մենք այլևս չճանաչենք դրանք:

Ագռակառ անունով մեկը կար,
ով ուզում էր ստեպի¹ պարուհի դառնալ:
Կարմրավուն այտերով ևս մեկը կար,
ուն Տոնետտի էին կոչում,
և մի չար մարդ կար նույնպես
Բադնյուս² անունով:

Խոսելուց առաջ նա միշտ ասում էր.

«Վատ լուր ունեմ ձեզ համար, ընկերներ»:

Հաջորդիվ, գրեթե լացելով ասում էր.

«Եղբայր Պեպեն պատրաստվում է

հարվածել դույլին»,

կամ ուրախությունից գլուխը կորցրած՝

«Քույր Կարմենսիտան ամուսնանում է»:

Նրա համար բոլոր նորություններն էլ վատն էին:

Շատ ուշ նրանց սկսեցի սիրել, գիտեմ: -

Մի օր Բադնյուն ամբողջովին թրջված,

դանդաղ մոտեցավ ինձ

և իր «Քեզ համար վատ լուր ունեմ»

մշտական արտահայտությունից հետո հարցրեց.

«Դու կոշկի խանութի գունատ երիտասարդը չե՞ս».

այն, ինչ նա լսել է, այն, ինչ նրան ասել են:

Անձրևոտ օր էր, և նա մի գույգ կոշիկ էր ուզում

Ագոսկառյին թաղելու համար.

«Որպեսզի շները չկծեն նրա երազանքները,

գունատ երիտասարդ»:

Այսպես, շները չեն կծի նրա երազանքները:

1. ստեպ - իռլանդական պար

2. բադնյուս /Badnews/ - վատ նորություններ

Փնտրել ու վերափոխել

Նախկինում ներողություն խնդրելու

պատճառ չունեինք:

Մինչև մեր բոլոր ընկերները չեկան յուր օրենքներով:

Եվ մենք էլ սկսեցինք ստեղծել մերը:

Հեշտ չէր:

Ստիպված էինք իրարից «ներողություն» խնդրել,

բայց «ներողությունը» միշտ չէր գալիս

քո ուզած պահին:

Այն գալիս է հենց այն ժամանակ,

երբ չես ուզում ընդունել նրան:

Առաջին փոքրիկ ներողությունն անցյալ տարի էր,

երկրորդը՝ գրեթե կրնկակոխ եկավ:

Ասում են՝ չպետք է շատ երկար սպասել.

իրար ետևից եկող «ներողությունները»

ավելի լավ են համակերպվում միմյանց հետ:

Ես կասեմ՝ որն է անհնարինը.

ունենալ «ներողություն» և չսիրել այն:

Պետք է ամբողջովին տրվես «ներողություններիդ»:

Նրանք փոխում են քո կյանքը, և շատ բան

կարող ես սովորել նրանցից:

Եթե ամեն ինչ լավ ընթանա, հաջորդ տարի

մենք կփնտրենք ու կգտնենք երրորդին ևս:

Պարզագույն օրենք՝ նոր «ներողությունները»

ծնվում են հմից:

Միշտ փորձիր լինել ավելի լավը.

փնտրիր և վերափոխիր

Ինքդ քեզ:

Հարկայծ ԿԱՆՈ

Պատերազմ

Որդիներն ու դուստրերը պատերազմի
շարունակությունն են այլ իմաստներով:

Լուսամուտների հաշվում

Մեկ, հինգ, տասնչորս, քսանութ:
Գիշերը հաշվում ես հարևանների լուսամուտները՝
միայն նրանք, որոնց լույսերը վառված են,
ապա խոհածում վառված լինելու
պատճառների շուրջ -
ուրախությու՞ն, ատամի ցա՞վ, տխրությու՞ն, հու՞յս:
«Տեսնես ձեզնից շատերը ցավի՞, թե՛ էքստազի մեջ են,
իմ հարևաններ»:
- դու պատասխան ունես՝ խանդով պահված -
Քանի՞սն են գրուցում: Քանի՞սն են խոսում
ինքներն իրենց հետ:
Քանի՞սն են լույսերը միացնում-անջատում լոկ
ստուգելու համար,
ասես ապրեին սառնարանում, որի դուռը փակելիս
լույսն անջատվում է:
Քանի՞սն են բաժակ բարձրացնում այն մարդկանց
առողջության համար,
ովքեր արդեն իսկ չունեն ոչ առողջություն,
ոչ էլ գինի:

Մեկ, հինգ, տասնչորս, քսանութ...

Այդ լուսավոր լուսամուտների դրամաներից
արշալույս չի բացվում:

Մենություն՞ն է, իրոք, համարվում փաստն այն,
որ այդ լուսավառ պատուհաններից
քեզ ոչ ոք չի հաշվում:

Պահը

*Ես դիմացս տեսնում եմ
իմ երիտասարդության քարտեզը:
Ու. Հ. Օդեն*

Ես աչքիս դեմը տեսնում եմ իմ ողջ
երիտասարդության քարտեզը:
Ես տեսնում եմ, որ այս ամենը կարող էր
իմաստ ունենալ,
եթե բոլոր սարսուցող կետերը միացնեինք առանց
մատիտը բարձրացնելու:
Ես տեսնում եմ մեր անցած ձանապարհը.-
ինչպես էինք ձանկրելով մեծացնում
մարդկանց միջկողային
դատարկ տարածությունը,
մինչև չքանդեինք նրանց միացնող
բարեկամական կապերը:
Հետո փախչում էինք՝ նյարդայնացած՝ սրբելով
մեր ձեռքերին մնացած արտահոսքը:

Մի բուռ փորձառություն,
որը, թվում էր, ունեցանք ձիշտ պահին:

Նույնիսկ մեր մաշկը չի դիմանում մեր ոսկորներին,
չի խղձում անգամ մեզ, ոչինչ չի ուզում
իմանալ մեր մասին:

Մենք այդ Պահի մասին հետո կխոսենք, ասես,
իրականում, ինչ-որ բան զգում էինք:

Մի բուռ փորձառություն,
որը, թվում էր, ունեցանք ձիշտ պահին:

Քնքշորեն ասված մի փունջ մերժում:
Այն քո քեռի՞ն էր, ով քեզ ասաց, որ
աչքի կնձիռներից կարելի է տարիքն իմանալ,
ինչպես կտրված ծառի բնից:

Գուցե դա կնոջ հետ անկողնում պառկել չէ,
ոչ էլ նախազգացում, որն հանկարծ
իրականություն է դառնում,
և դու հպարտանում ես քեզնով:
Կարող էր նրանցից ոչ մեկն էլ չլիներ
այն օրը, երբ պահը այնքան մոտ էր թվում:
Հիմա հիշում ես. երբ հորեղբայրդ կացնով
կտրել էր մատաղի համար ընտրված հորթի գլուխը,
դու արագ մոտեցել էիր՝ մորթվածի
աչքերի կնձիռներով

հաշվելու նրա տարիքը:
Դու նույնիսկ այն ժամանակ չգիտեիր,
որ դա հենց այն օրն էր, երբ դու Պահին
ավելի մոտ էիր, քան երբևէ:

Դու հինգ տարեկան էիր այդ ժամանակ,
դրսում ցուրտ էր,

Հարկայծ ԿԱՆՈ

Իսկ հորթը՝ քեզնից փոքր էր:

Եվ դու անդադար մորդ հարցնում էիր՝
մահացածների աչքերում
երկամբ է մնում այն, ինչ նրանք տեսնում են
վերջին անգամ:

Նրանք մորթեցին հորթն ու տարան քաղաք:
Իսկ հորթի հետ՝ նաև Պահն այդ:

Հանգավոր բանաստեղծություն գիշերվա մասին

- Գիշեր, զենքի հզորություն:
- Գիշեր, ձիու տեսողություն:
- Գիշեր, ձիավորի ծիսակատարություն:
- Գիշեր, սլացող նետի արագություն:
- Գիշեր, տան բարձրություն:
- Գիշեր, շքամուտքի լուսավորություն:
- Գիշեր, հաձելի խելագարություն:
- Գիշեր, դժոխքի պատրություն:
- Գիշեր, գիշերային անքնություն:
- Գիշեր, շնչահեղծություն:
- Գիշեր, ընդդիմամարտություն:
- Գիշեր, մտահոգություն:
- Գիշեր, մենավորի չարություն:
- Գիշեր, զանգերի ցնծություն:
- Գիշեր, կովի զանգի զվարճություն:
- Գիշեր, ապաստարանի ապահովություն:
- Գիշեր, գայլերի թաքստոց.
- Գիշեր, հավերժահարսի հպարտություն:
- Գիշեր, մեղուզայի հոգոց:
- Գիշեր, սիրած գրականություն:
- Գիշեր, բոցերի շրջնություն:
- Գիշեր, ոչ ոքի քաղցրություն:
- Գիշեր, սառը ջերմություն:
- Գիշեր, մակերևույթի զառիթափություն:

- Գիշեր, շուրթեր և կտուց:
- Գիշեր, անտառի տխրություն:
- Գիշերը, բվերի մղկտոց:
- Գիշեր, լուռ խոսակցություն:
- Գիշերը, մորենու սփռվածություն:
- Գիշեր, ջունգլիների խորություն:
- Գիշեր, աղոթքի զորություն:
- Գիշեր, սուրբ քնկոտություն:
- Գիշեր, հագնվելու սովորություն:
- Գիշեր, օրվա ապահովություն:
- Գիշեր, կորած ժամանակ:
- Գիշեր, շարունակվում է ժամանակը:

Բարի գայլ

Բարի գայլը նա է,
որ չի ուտում մեկ այլ բարի գայլի:
Որն, առաջին հերթին, կարողանում է տարբերել:
Որը լուսանցիկ հայացքով նայում է քեզ,
տեսնում վտանգը, երբ դու անցնում ես
սառցակալած լճի վրայով:
Նա իր ժանիքները կխոթի պարանոցդ
միայն մի դեպքում -
երբ ելք չունենա.- հետո նորից կկրծոտի ձյունը՝
որպես խոստովանություն կամ պատիժ:
Նա կսևեռի հայացքը քո աչքերին և,
անվստահության դեպքում,
իսկույն կցատկի քո սև բիբերի մեջ:

Չար գայլ

Նա այն բարի գայլն է,
որ նախկինում էր բարի, կամ՝ չար լինելուց
անմիջապես առաջ:

Կամ ոռնացող փոթորկի ժամանակ:
Կամ, իհարկե, երբ թաթը թակարդի մեջ էր:
Երբ արծաթագույն գնդակը մխրձվում էր կուրծքը:
Նա ողջ է մնում և մեղավորներ փնտրում,
Նա պատձառը տեսնում է
երախի մեջ:

Չար գայլի լավ կողմը
նրա կույր հավատն է իր ոտքերին ու ժանիքներին:
Երբ նա զգում է ինչ-որ մեկի վախը,
այնքան դանդաղ է շարժվում նրա կողքով,
ասես անցնում է ոտնաթաթի չափ նեղ կամրջով:
Նա հավատում է, որ իր նրբագեղությունը
կփրկի իրեն:

Այն չի փրկի նրան, բայց ի շնորհիվ դրա, նա
ավելի կուժեղանա:

Մարդիկ, որոնց զանգում եմ

Կան մարդիկ, որոնց մի ժամանակ պաշտում էիր,
իսկ հիմա զանգում ես միայն ծննդյան օրը:

Մարդիկ, ում զանգում ես աշխատանքից
բողոքելու կամ

օգնություն խնդրելու համար:

Կան մի խեղկատակ է քո բաժանմունքից զանգում
քո անհաջողության չափը ստուգելու համար.

«Ոչ, ես չեմ, իսկ նա երբեք...»

Կան մարդիկ, որոնց զանգում ես լոկ այն ժամանակ,
երբ կինդ լքել է քեզ

(և, ովքեր քեզ զանգում են լոկ այն ժամանակ,
երբ ամուսիններն են լքել իրենց):

Կան մարդիկ, որոնց այդքան շատ չէիր զանգի,
եթե ավելի մտերիմ լինեիր:

Կան մարդիկ, որոնց զանգում ես բացատրություն
պահանջելու համար,

ովքեր զանգել էին՝ քեզ նախատելու:

Կան մարդիկ, ովքեր չորս տարին մեկ են զանգում,
բայց ջերմացնում են հոգիդ և վստահեցնում,

որ քեզ հետ են թիկունք-թիկունքի, հոգի առ հոգի:

Կան զանգեր՝ ասես անապատի երկար միրաժ լինեն
կամ ձախողված գովազդ. «Գուցե սա ձեզ

կհետաքրքրի...: Դուք շահել եք...»:

Կան մարդիկ, ովքեր միշտ մյուս գծում ավելի կարևոր
մեկի հետ են խոսում,

ու քեզ ասում են. «Ես քեզ կզանգեն»,

բայց այդպես էլ ետ չեն զանգում:

Կան մարդիկ, որոնց զանգում ես, որ չայցելես ու
ստիպված վիսկի չտանես,

իսկ հետո այդ զանգն ավելի թանկ է նստում

քեզ վրա, քան խմիչքը:

Կան մարդիկ, որոնց չես կարող զանգել,

քանի որ նրանք բարկացած են քեզ վրա

կամ բանտում են կամ մոռացել են քեզ կամ

ընդհանրապես մահացած են:

Դժվար է:

Կան մարդիկ, ովքեր մինչև զրույցի ավարտը

ձեռքը քթից չեն հանում:

Կան մարդիկ, ովքեր հեռախոսին չեն պատասխանում,

բայց միշտ հաշվում են զանգերը մութ սենյակում,

կամ ով, շամպայնը ձեռքին,

կարող է ամեն մի զանգի հետ կույ տալ խաղողի

մի հատիկ:

Կան մարդիկ, ովքեր երբեք չեն զանգում,

որովհետև գիտեն, որ մեկ ուրիշը կարող է

պատասխանել:

Կան մարդիկ, ովքեր զանգում են,

որ միայնակ չզգան,

և մարդիկ, որոնց համար միայնակ չզգալու

միակ ձանապարհը

հեռախոսագրույցն է:

Կան մարդիկ, ովքեր զանգում են ամեն ամսվա

տասներեքերորդ օրը,

գուցե մեղամաղձության էգոթերիկ վախով:

Ջանգում ես՝ հաստատելու այն, ինչ արդեն գիտես:
Կամ զանգում ես՝ հակասելու քեզ:
Սկսում ես զանգել, բայց չես հիշում
նրանց հեռախոսահամարի վերջին նիշը:
Եվ կան քեզ նման շատերը -
մարդիկ, ովքեր հազվադեպ են զանգում
զինադադար հայտարարելու կամ այն
խախտելու համար,
կամ երբ դրսում ձյուն է գալիս,
կամ պարզապես ասելու՝ «Հիմա ի՞նչ»:
կամ՝ «Այդտեղ է՞լ է ձյուն գալիս, աղջիկ»,
իսկ դու պատասխանում ես. «Այո, տղա»:

Կորսված բաներ, գտնված հույսեր

Նիցշեի համար հույսը կորստի սկիզբն է:

Իսկ մենք կարող ենք ասել ավելին.

ամեն ինչի սկիզբը կորստի սկիզբն է:

Մենք բոլորս կորցնում ենք ինչ-որ բան, բայց ոմանք՝

ավելի հազվադեպ, քան մյուսները:

«Իսկ ինչպե՞ս»,- անողորմ հարցնում ենք մենք:

«Հազվադեպ»,- պատասխանում ենք՝

իրականում չիմանալով պատասխանը:

Հազվադեպ կորցնելը նաև կարող ենք կոչել

ձեռքբերում:

Բայց ես, որ չեմ սիրում կորցնել ինչ-որ բան,

սիրում եմ ինքս ինձ անտառում կորցնել:

Հատկապես

երաժշտության ու շնչառության,

մաշկի ու մորթու անտառների մեջ:

Գովասանք հավասարության համար

Փիլիսոփան նախաձաշի համար շվեյցարական
բուլկի խնդրեց

և թեթև ֆրանսիական ձվածեղ:

Կոլումբիական սուրճից պղպջակներ են առաջանում
իտալական սրճեփի մեջ:

Նա շարունակում է գրել հողված Հնդկաստանի մասին,
մինչ ձապոնական բալենին ավետում է
գարնանամուտը:

Անցած ամառ նա ծով չէր գնացել,
որովհետև պորտուգալական ռազմանավերի վրա
ժանտախտ էր տարածված:

Ճաշից հետո նա կխմի ամերիկյան սուրճ և
կդժվարանա
ընտրություն կատարել բասկյան գաթայի ու
կատալոնյան կրեմի միջև,
և խանդավառությամբ կասի. «Իսկապէս երկուսն էլ
տնական են»:

Ռուսական աղցան և «Սև ռուս» կոկտեյլ, այո, բայց
երբեք չէր օգտվի ինքնասպանության լավագույն
ձևերից մեկից՝

ռուսական ռուլետկայից:

Նա աշխարհաքաղաքացի է և համոզված,
որ ազգային խտրականությունը բոլոր չարիքների
արմատն է:

Կյանք վագրի հետ

Կարևոր չէ՝ ինչպես է հայտնվել այստեղ:
Գուցե նախորդ վարձակալն է թողել նրան
անփութորեն կամ միտումնավոր,
կամ գաղտագողի ներս է մտել պատուհանից,
ու մենք չենք նկատել,
իսկ, գուցե, *վինիլային նյութով*¹ մեր հավաքածուն
ատող հարևանն է նրան
բերել այստեղ՝ մեզ ծաղրելու համար,
կամ՝ կապույտ կոմբինեզոնով տղամարդը,
ով ամեն ամիս գալիս է ստուգելու
ջրի, գազի, հոսանքի հաշվիչները:

Ես խորհրդակցել եմ իմ սիրած մտածողների՝
*Վիտգենշթայնի*²,
*Միորանի*³, *Շտայների*⁴ հետ.
նրանք նույնպես պատասխան չունեն:
Մի բան գիտեմ միայն՝ մեր մեջ վագր կա:

Նույնիսկ երբ օրերն աննկատ անցնում են,
մենք չենք բարձրաձայնում, որ հույսը կարող է
մեռնել,
ինչպես նախկինում էր,
որովհետև գիտենք, որ վագրը կվերադառնա,
ու նա ձանապարհին է:

Վագրը կատու չէ, ուստի դժվար է իմանալ՝
երբ է վերջապես սպառվելու նրա կյանքը:

Հաճախ վագրի մասին մտածելն իսկ կարող է
անկողնուց վեր կենալը դժվարեցնել:

Վագրը պետք է արթնացներ որս անելու
մեր ցանկությունը, բայց ... ոչ:

Մենք այնքան շատ էինք քույրերով ու եղբայրներով,
ցավոք, հիմա բոլորս

միասին չենք.

մի՞թե կարող ենք մեղադրել վագրին:

Նրանցից յուրաքանչյուրի հեռանալուց առաջ

միշտ վեճ էր լինում, բայց, վատահորեն,

չէինք կարող մեղադրել վագրին:

Ջնայած երբեմն ցանկալի է

տանը վագր պահել՝

մեղքը բարդելու նրա վրա:

Ուշանում ենք աշխատանքից, ինքներս մեզ
ասում ենք՝ ամեն ինչ վագրի պատճառով է:

Երբեմն ձիշտ է, երբեմն ... իրականում՝ ոչ:

Ժամացույցի սլաքները դանդաղ են շարժվում
վագրի հետ ապրելիս.

թվում է՝ դեռ ժամանակ ունես, բայց հանկարծ
հասկանում ես, որ արդեն ուշ է:

Երբեք բավականին ժամանակ չես ունենում,
որքան կարծում ես:

Թվում է՝ անհնար է, որ վագրը կարող է իր թաթով
շարժել ժամացույցի սլաքները:

Պատասխանատու հայտարարություն է, իրոք,
վագրերը կարող են
կանգնեցնել ժամանակը:

Գուցե մենք չենք կարողանում ձիշտ մեկնաբանել
նշանները.
սառնարանից բացակայող սնունդ,
խձձված պահարաններ,
պատառոտված հագուստ:

Պետք է զգոն լինել ու զգուշանալ մեր մեջ գտնվող
վագրից:

Նա այլևս ձագ չէ,
չնայած, գուցե, ամենասկզբից էլ ձագ չէր:
Գուցե նա մեծացել է մեզ հետ: Գուցե ի սկզբանե
հասուն վագր էր:
Իսկ գուցե նույնիսկ միայն մեկը չէ: Գուցե երկուսն են
կամ երեքը, ինչպես ասում են:
Վստահորեն չենք կարող ասել. դա առեղծված է:

Տանը չենք համակերպվում դրան,
քանզի հազվադեպ ենք նկատում այդ ամենը:

Երբեմն թվում է՝ ինչ-որ անորոշ ներկայություն կա
մեր ետևում.

պարզապես ինչ-որ բան շնչում է,
վատ հոտ է արձակում,

լրտեսում է մեզ, երբ մենք քեֆի մեջ ենք,
քննում է մեր երազանքները,

նախանձում է, երբ ծիծաղում ենք:

Մեր արցունքները խձձում են վագրին, նա՝
ինքն էլ չի հասկանում՝ ինչու:

Մենք շրջվում ենք մի պահ՝ տեսնելու նրա պոչը՝
ամբողջովին թավշյա ու գալարուն,

ու նկատում ենք թաթերի հետքեր գորգի վրա,
վայրի մռնչյուն,

ձանկոած տեղեր փայտե հատակին,

հագիվ նկատելի փոքր հետքեր՝

նշաններ, որ վագրը դեռ ներկա է:

Ռադիոյով լսում են փորձագետներին -

այս վագրը, այն վագրը, վագրը, վագրը...

Եվ ես ինքս ինձ ասում եմ. «Դու այդպես չէիր խոսի,
եթե տանը վագր ունենայիր»:

Մենք շտապում ենք մեր փոքրերին քայլել
սովորեցնել,

որովհետև անհանգստանում ենք,

որ վագրին գուցե դուր չգա

ուրիշին տեսնել քայլելուց չորս ոտքի վրա:

Դժվար թե որևէ մեկն այցելի քեզ,
երբ դու ապրում ես վագրի հետ:

Հաճախ մենք էլ ենք մոռանում, որ մեզ հետ
վագր է ապրում,
օրերով մոռանում ենք նրան, մինչև այդ անիծյալին
հանկարծ տեսնում ենք մոտիկ կանգնած,
ու բոլորովին առանց իրադարձության մի օր.

ասենք չորեքշաբթի կամ աշնանը,
կամ աշխատանքից վերադառնալիս՝
հոգնած, սուլելով:

Կան վեհանձն վագրեր նաև, կհավատամ:

Վագրը վագր է: Ավելին չէի ասի:

Սա բնակարան է, բայց միևնույն է՝
ապաստան ենք տալիս վագրին:

Մտածում ենք՝ տունը վաճառել,
առանց գնորդին ասելու,
բացենք դռներն ու համբերատար սպասենք վագրի
հեռանալուն,
բացենք բոլոր ծորակներն ու դուրս գանք դժոխքից.
բոլոր հնարավոր անելիքներն անցնում են
մեր մտքով,-

ի վերջո հասկանում ենք,
որ մենք պարզապես սովորել ենք ապրել վագրի հետ:

Մի՞թե կարող է սեր առաջանալ վագրի հանդեպ,
նույնիսկ՝ խորանալ հետո:
Կարող է պատահել՝ նույնիսկ խորանալ,
բայց վագրը վագր է,
երբեք չի փոխի իր կաշին:

Է՞գ է, թե՞ արու: Հիսուն տարեկան է:
Տասնհինգ: Յոթանասուներկու՞: Հինգ հարյուր:
Ընթրիքից հետո, երբ մենք ձպձպացնելով
ընկույզ ենք ուտում, վագրը
ոչինչ չի ուտում,
իսկ մենք խորհում ենք նրա տարիքի մասին:
Նա ծերանու՞մ է ընդհանրապես: Նա նրբանու՞մ է,
թե՞ կոպտանում:
Իսկ գուցե այդ ամենը սուտ է:
Գուցե սատանան է
վագրի դիմակ հագել:

Կուզենայի հստակ և հակիրճ գրել վագրի շեղակի
գծերի վրա:
Ես նայում եմ փողոցի մարդկանց և
չեմ համարձակվում հարցնել՝
նրանք է՞լ են ապրում վագրի հետ: Մի՞թե բոլորն էլ
ապրում են:
Կարո՞ղ է «Խոր Վերք» է այն պետության անունը,
որտեղ բոլորս ապրում ենք:
Ճի՞շտ չէ, որ ասում են՝ բոլոր տղամարդիկ ու կանայք
միևնույնն են:

Ես ապրում եմ վագրի հետ և, անկեղծ ասած,
չգիտեմ՝
կյանքս իմաստ կունենա՞ր
առանց վագրի հիմա:

1. *Վինիլային նյութ - արհեստական սինթետիկ նյութ. դա պլաստիկի տեսակ է, որը պատրաստված է էթիլենից (գտնվում է հում նավթում) և քլորից (գտնվում է սովորական աղի մեջ):*

2. *Լյուդվիգ Յոզեֆ Յոհան Վիտգենշթայն - ավստրիացի փիլիսոփա, անալիտիկ փիլիսոփայության հիմնադիր, 20-րդ դարի նշանավոր մտածողներից մեկը: Բ. Ռասելի հետ մշակել է տրամաբանական ատոմիզմի ուսմունքը:*

3. *Էմիլ Սիորան - ռումինացի փիլիսոփա և էսեսիստ:*

4. *Ռուդոլֆ Շտայներ - ավստրիացի փիլիսոփա, միստիկ գրող, էզոթերիկ, անտրոպոսոֆիա հոգևոր ուսմունքի հիմնադիր:*

որքան ենք սիրում այն գինարբուքային դողը,
 որը զգում ենք ամեն անգամ,
 երբ լսում ենք *akelarre* բառը,
 հավանաբար, որովհետև այն գրգռում է
 քարանձավներում
 կծկված մերկ վիուկներին:
 Որքան ենք սիրում մենք բասկերեն բղավել
 օտար երկրում,
 որ նրանք մեզ լսեն ու մտածեն՝ «որտեղից են
 այս պատանիները»,
 (կարծես թե գիտեն, թե որտեղից են իրենք):

Որքան ենք սիրում բացատրել, որ բասկերենը
 հնդեվրոպական նախալեզու է՝
ah, oh, cee-i-a!
 ու նայել նրանց կախված ծնոտներին, ու մեզ դա
 դուր է գալիս,-

որքան հիմար ենք:
 Նույնիսկ Դրակուլային³ էր պետք երկրով լի
 ձամպրուկ, որ իր տան մեջ զգա,
 իսկ մեր ձամպրուկը լի է բառերով:
 Որքան ենք սիրում հակասել կլիշեներին⁴, երբ օտար
 երկրում քնքշորեն կարդում ես
 բասկերեն մի բանաստեղծություն և
 ինչ-որ մեկն ասում է. «Ինչքան գեղեցիկ է
 բասկերենը հնչում,
 կարծում էի՝ այն կոպիտ լեզու է»:
 Որքան ենք մենք սիրում նման
 արտահայտությունները՝
 «նա ամենահին լեզուներից է»,

և այսպես շարունակ:

Որքան ենք մենք սիրում, երբ նրա մասին ասում են՝
«ցեղերի լեզուն» և այլն:

Այո, մենք հպարտ ենք, որ մեր արտադրանքը
արտահանում ենք

փոքր չափաբաժնով. դա էլ հենց

նշանն է նրա արժեքի:

Նույնիսկ երբ մենք լսում ենք *zulo* բառը, որ
նշանակում է «ահաբեկիչների որջ», ու չնայած
փոքր-ինչ ամաչում ենք նրա վատ իմաստից,

բայց սրտի խորքում հպարտ ենք նաև:

Գուցե կնախընտրեինք այլ բառեր առաջարկել,
բայց ինչ անենք:

Նույնն է, երբ որ իսպանական նորություններում
լսում ենք

kale borroka արտահայտությունը, որ նշանակում է
«փողոցային կռիվ»:

Մի՞թե այսպես մենք կհաղթենք՝

բառերն արդարացնելով:

Նույնիսկ Նաբոկովը մի անգամ մեկը թաքցրեց,
ով գիտի՝ որտեղ:

Մենք շուտով կմեռնենք, բայց

որքան ենք սիրում մեր *gaupasa* (ամբողջ գիշեր) և
izkiriatu (գրել) բառերը:

Որքան ենք մենք սիրում մեր չթարգմանվող,
անկշիռ բառերը՝

kantuz և *laztana* և *zatoz* (Արի, սիրելիս, երգիր),

որոնք իրականում քիչ կապ ունեն «երգել», «սիրել»,
«գալ» բառերի հետ:

Որքան ենք մենք սիրում *fuck* բառի բասկյան
տարբերակները՝ *larrua yo* և *larrua jo*,
որոնք օգտագործում ենք արտահայտելու՝
երբեմն՝ սեր, երբեմն՝ ատելություն իմաստով:
Երբեմն պետք է *ցնցել ձային* կամ *մտրակել*
խողովակին... կամ *ոչնչացնել Ջեդիմ⁵*:
Կարևոր է միշտ ընտրել ձիշտ պահն ու խոսքը:
Եվ, ամենից շատ, որքան ենք մենք սիրում
գեղասահել *zed to zed* (ինչպես Ջեդը):
Օ՛հ, ի՞նչ է լեզուն, եթե ոչ հաստոց՝ տեխնիկա,
հնչյուն, աղմուկ:

Մենք շուտով կմեռնենք, բայց
Zatoz kantuz, laztana. Zatoz kantuz. Zatoz.

Արի: Արի հիմա: Արի երգելով: Արի երգի հետ:
Դու՝ իմ միակը: Ում ես սիրում եմ փայլափայլ:

Արի երգելով: Արի երգի հետ: Արի հիմա: Արի:

1. *pelota court: Jai-alai* – խաղաղաշտի գնդակ՝ Ջայ-ալայ (բասկ. *jai alai* - զվարձալի տոն) խաղ է, որի ընթացքում նետված գնդակը պետք է ցատկի հատակից դեպի պատը:

2. ԿՀՎ - Կենտրոնական հետախուզական վարչություն(ԱՄՆ)

3. Դրակուլա - Իռլանդացի գրող Բրեմ Սթոքերի վեպը: Գլխավոր հերոսն է ազնվական վամպիր կոմս Դրակուլան:

4. կիշե - Արտահայտություն, միտք կամ տարր գեղարվեստական ստեղծագործություններում, որը ժամանակի ընթացքում հաճախակի կիրառվելով՝ կորցրել է իր նախնական իմաստն ու ազդեցությունը այն աստիճան, որ դիտարկվում է ծեծված կամ էլ հնացած:

5. Ջեդ - Լեզունդների լիգայի չենային:

Հարկայծ ԿԱՆՈ

Նկատել եք, որ

Աստված օգնում է տգետներին: Ցավոք,
մրանք դա չեն իմանում:

Բաժանում

Դա սկսվել էր խնորվել հենց մեր հանդիպման օրից,
 երբ պետք էր
 պաստառ ընտրեինք՝ նախշերով թե հասարակ:
 Խոհանոցի համար ես ուզում էի հասարակ ու
 հանգիստ գույներով պաստառ՝
 քո ընտրած անձաշակ ձապոնական
 կախիչի փոխարեն,
 որից ուզում էիր կախել մորաքրոջդ տված գլխարկը:
 Հյուրասենյակի համար ուզում էի ծաղիկներով
 պաստառ.
 դու քթիդ տակ ասացիր՝ «Լավ, հաղթեցիր»:
 Հենց սկզբից էլ մենք բաժանեցինք բնակարանի
 ամեն մի նուրբ մետրը:
 Որոշ ժամանակ անց արդեն հերթով էինք քնում,
 հանց ժամապահներ ամրոցում:
 Զգեստապահարաններ, գզրոցներ, դարակներ,
 հատակի սալիկներ՝
 սառույցի սառը երկրաչափությամբ ու անդիթմ
 ռիթմով:
 Յուրաքանչյուրս ունի իր տարածքը, յուրաքանչյուրս՝
 իր բարձիկները,
 նույնիսկ յուրաքանչյուրն՝ իր սեփական խորանարդ
 դեցիմետր թթվածինը
 բազմոցի վրա,

յուրաքանչյուրն ունի մյուսին չվատահելու
իր իրավասությունը,
յուրաքանչյուրն՝ իր սիրեկանը, յուրաքանչյուրն՝
իր սեփական ժամերն
առանց երեխաների,
յուրաքանչյուրն՝ ընտանիքի մասին հոգալու
իր պարտականությունը,
յուրաքանչյուրն՝ իր հին ընկերներն
իրենց շաղակրատությամբ,
յուրաքանչյուրն ունի մյուսի ընկերների հիմար
կատակների վրա
ծափահարելու իր սահմանները,
յուրաքանչյուրս բաց չի թողնում
իր հնարավորությունը
նվաստացնելու զուգընկերոջը՝
սիրախաղ անելով նրա լավագույն ընկերոջ հետ:
«Եվ հոգին, և ազատությունը ունեն իրենց գինը.
դուք դա կտվորեք կյանքի դպրոցում»:
Հետո ի հայտ եկան գրառումներ,
գրքեր ու նամակներ,
որոշակի թաղամասեր ոտք չդնելու
պարտավորություն,
հասցեների գրքույկը բաժանելու առաջադրանք,
ինչպես նաև՝ թերթի բաժինները.

«Արվեստ, ձամփորդություն, սնունդ՝
ո՞րն ես ընտրում»:

Ընկերներ՝ իմ ու քո:

Գիր թե՛ դու:

Անհնարին, տիտանական աշխատանք է սա՛ հանց
Դեղին էջեր պատռելը,-
երկուսն էլ ոչ այլ ինչ են, քան եղունգներ
փչացնելու միջոց:
Բաժանումն ասիմետրիկ է, երբ իրերն
անհամեմատելի են.

«Եթե ձեռք բերես Էդուրնեի¹ ձայնասկավառակը,
կարող ես հրաժեշտ տալ քեզ հոգեհարազատ
70-ականների սկավառակներին»:

Պետք է ընտրել: Հո հեշտ բան չէ բաժանելը:
Էլ չխոսենք բոլոր այն բաների մասին,
որ ոչ ոք չի ուզում իր նոր տունը տանել.
(մենք միայն կրակի վրա բեռզին կլցնենք),-
մեր՝ մի ժամանակ միմյանց գրած երկտողերը,
հարսանեկան նկարները (անձրև էր գալիս),
մեր դատեր նկարները քեզ հետ (դու չգիտեիր,
որ ես դրանք ունեմ),
մեր որդու նկարներն ինձ հետ (ես չգիտեի,
որ դու դրանք ունես),

քո նվերները մեր որդուն,
իմ նվերները մեր դատերը,
իմ նվերները քեզ,
քո նվերներն ինձ,
նվերներ՝ մեկը մյուսին,
ով գիտի՝ էն էլ որքան:
Տանել, թե՛ չտանել՝ պարզապես կարելի է վառել:
Կոխի բացիլը կարող է մնալ տուբերկուլյոզով
հիվանդի հագուստի վրա
նույնիսկ բուժվելուց հետո, ամեն դեպքում,

քիմիաթերապիան կշարունակվի ևս երեք շաբաթ:
Եթե հիվանդը երիտասարդ է, նա կդիմանա,
նա կանցնի

դրա միջով,
բայց ամեն դեպքում...

Լինում են տարբեր դեպքեր:

Բաժանիր դրանք նույնպես:

Հեռուստացույց, սառնարան, ծալովի աթոռներ
(երեք),

մեր ժամկետագրերը՝ նույնպես:

«Կեցցե՛ Ջերչիլը: Երկրորդ համաշխարհային
պատերազմից հետո բաժանումն
ավելի դյուրին էր», - ինքդ քեզ մրմնջում ես:

Իսկ մենք դեռ նոր ենք սկսել, սա չի ավարտվի.
մենք կտրում ենք, թողնում ենք, իրերը փաթաթում և
բաժանում ենք,

ընտրում ենք մետրոյի կանգառները, որ միմյանց
չհանդիպենք այլևս,

մեր սիրելի ռեստորանները, մաշկաբանի
հեռախոսահամարը,

շունը, մեր ոսկե ձկնիկը, «Թոմը և Ջերին»,

մեր «Ջիմ Ջարմուշ» ֆիլմը, երկվորյակները,

տաքսիների կանգառները, քաղաքի երեք լողափերը,

«Կտրտած Բանան» բաղադրատոմսերի գիրքը,

«Արդարություն և Արև» խաղաքարտերը,

փողոցներն ու սրճարանները վերջնական

բաժանելու անհրաժեշտությունը,

որ կայցելենք առաջիկա երեսուն

տարիների ընթացքում:

Շատ ավելի հեշտ կլիներ ինքներս մեզ կիսելը՝
հոգեմետ դեղամիջոցներով կամ կացնով,
վերածվելով աղոտ եռանկյունիների՝
սառույցի սառը երկրաչափությամբ:

1. Էդուրնե Գարսիա Ալմագրո - իսպանացի երգչուհի, դերասանուհի և հեռուստահաղորդավարուհի

Պարտքեր

Ըստ բժիշկների՝ քո ոսկորներում կայցիումի
պակաս կա,
և, նրանց ասելով, քեզ մոտ սկիզբ է առնում
տարեց մարդուն հարիր հիվանդությունը:
Ծերության և կին լինելու հիվանդությունը,-
ձախ ականջիդ
շնչում է քո խիղճը:
Կին լինելու հիվանդություն՝ ծիծաղելի է,
ձիշտն ասած, հավանաբար, դեմ չես լինի
հաջորդ կյանքում ևս կին լինել կրկին.
ցանկացած փոխակերպում խճճված ճանապարհ է
իշխանություն ձեռք բերելու համար, եթե հաջողվի,
պահիր
քո ով լինելու մի կտոր հիշողությունը:
Իսկ ծերություն՝ նր:
Ժամանակն է, որ ընդունես այն:
Ամեն ինչ ժամանակի հարց է կամ
ժամանակի պակաս:
Դու միացնում ես տասնհինգերորդ տարեդարձիդ՝
ընկերոջդ քեզ նվիրած ձայնագրությունը.
այժմ երաժշտությունն այդ չես կարող լսել նույնիսկ
հինգ րոպե:
Ինչ-որ մեկը թակում է դուռը, սովի մատնված մեկը.
«Դուք ինձ պարտք եք փետրվարի համար»:
Գուցե դա այն խեղճ թշվառի հառաչանքն էր,

ով իր վաղաժամ մահն էր փնտրում
երկրորդ կյանք մտնելուց առաջ:
Փետրվարի՞՝ ամենադաժամ ամսի՞:
Ի պատասխան տանտիրոջ՝ հնչում է հետևյալը.
«Կրոնական նկատառումներից ելնելով, դեմ չէ՞ք լինի
մոռանալ փետրվարը, և ես պարտք լինեմ
երկու մարտի համար»:
Բայց դու լռում ես:

Հազիվ ես ոտքի վրա մնում՝ կախված
դռան բռնակից:
«Դուք ինձ պարտք եք փետրվարի համար»,-
լավում է կրկին:

Դու դա զգում ես, իսկապես, այո:
Ոսկորներիդ մեջ գտնվող այդ բարբարոսն
այժմ անուն ունի՝
փետրվար:

Ոչինչ չգիտեի

Շատերն այլ կերպ են հասկանում.
բայց դա մոռանալ է, և ոչ թե ներել, որն ավելի հեշտ է:

Ես, սակայն, չեմ մոռանում.
Ես հիշում եմ այն կանանց, որոնց մինչև բլուրն
առաջնորդեցի:

Ի՞նչ եղավ հետո. նրանք մնացին այնտեղ:

Իրականում յուրաքանչյուրն ուներ իր բլուրը:

Ես իջնում եմ:

Ես չեմ մոռանա նրանց՝ այդ միայնակ կանանց՝
մի-մի բլրի վրա կանգնած:

Մենք ժամանակ ենք անցկացնում,
դրժում խոստումները:

Ես հեռանում եմ իմ սեփական նվաստացումներից,
ու գրում նրանց մասին:

Տարիների ընթացքում կարելի է գրել
չնչին հեռավորությունից անգամ:

Գրել նախքան նվաստացումը:

(Կամ, գուցե, ավելի լավ է ոչինչ չգրել):

Ես տեսնում եմ քեզ քո դագաղում՝
հանգիստ պառկած -
ոչ վաճառու և ոչ էլ մերկ,
շորդ պարկեշտորեն կռձկած մինչև պարանոց:

Եթե կարող էի համտեսել քրտինքդ,
ինչու՞ ոչինչ չգիտեի հիվանդությանդ մասին:

Ըստ ուսումնասիրության,
կանաչք մեկուսանում եմ
վատ լուր ստանալուց, իսկ մենք՝ տղամարդիկ,
ընդհակառակը,
բռնում ենք մեր մայրերի, մեր վախերի
կամ մեր կանանց ձեռքը:

Մեզնից շատերն են հիմա քեզ նայում: Քո աչքերը
բաց չեն ոչ մեկի համար:

Մարդիկ լացում են: Ես լացել էի տանը, ավելի վաղ:

Ես նայում եմ բլրին:
Դու այնտեղ չես, միայն երկինքն է:
Նայում եմ երկնքին, դու այնտեղ չես,
միայն կապույտն է:

Դու կհայտնվես նրանց թեթև ծիծաղի մեջ,
ուն սիրում էիր, սակայն արդեն որպես մի ուրվական:

Լուռ և Ստենդալով համակված

Արժե նորից ասել.
լուռ և Ստենդալով համակված:

*Շատ բան ցանկացիր, բայց
շատ բանի վրա հույսդ մի դիր, ոչ մեկից
ոչ մի բան մի խնդրիր երբեք:*

Նմանվիր ծառերին, որոնք իրենց արմատներով
տեղահանում են սալահատակները.

խորացնելով արմատներն՝ իրենց գոյությունն են
պահպանում առանց թույլտվության,
դանդաղ տանգոյի պես
տարածվում են ընդերքում:

Քիմիաթերապիա

Միայն մի բան կա ավելի ձնշող,
բան հիվանդանոցը,
ու դա գերեզմանոցը չէ, ո՛չ,
դա հիվանդանոց տանող ավտոբուսն է՝
լի մարդկանցով,
ռենտգենի լուսանկարները ծրարի մեջ,
թևի տակ առած,
խոր ավազանի մեջ կորցրած հայացքներով,
որոնք ոչ դու և ոչ էլ ես երբեք չենք կարող տեսնել:
Քիմիաթերապիա ընդունող վեցամյա երեխայի
անմեղ ժպիտը
ուղղակի պատռում է սիրտդ:
Երկու ծեր կին իրենց ռենտգենյան լուսանկարները
պահելով պատուհանին՝
զրուցում են ոգևորված.
«Նայիր, ահա, այդ սպիտակ կետն է»:
Նրանց՝ ավելի քան ինը հերց հաճախություն ունեցող
ձայնով խոսակցությունները հասնում են ականջիդ.
բառերը պայքարում են
ժայռից հոսող երեկվա արցունքների դեմ:
«Կտեսնես, երբ ասեմ ամուսնուս, կտեսնես,
թե ինչ զբոսանքների ենք գնալու երկուսով,
երբ մեզ անվասայլակ տան:
Նրանք մեզ կկոչեն Կոյտ և Ռոդրաներ Իշմայել»:
Կոյտ և Ռոդրաներ՝

մարմնովս սարսուտ անցավ, երբ դա լսեցի:
Հետո խիզախ կիմն ավելացրեց,
որ կաթվածահարությունը
ձգվել է դեպի ձախ կամ գուցե աջ:
Ամեն մեկն իր ռենտգենը թևի տակ առած,
իր բաժին քաղցկեղով,
իր լքվածությամբ,
իր աչքի պրոթեզով կամ օրթոպեդիկ ձեռնոցներով:
Եթե սա չի պատռում սիրտդ,
թող նրանք քեզ այրեն, քանի դեռ օդը կացին
չի դառել:

Իշմայելն ակնկալում է մեր շունչը:
Մի պահ պատկերացնենք.
Իշմայելը, թերևս, հանգիստ, գուցե և կարձ կյանք
ունեցող մի մարդ,
մինչև ծնկները ծածկող
շոտլանդական վերմակի վրա շախմատ է խաղում՝
երբեմն հառաչելով, երբեմն ժպտալով:
Իշմայել՝ ինքը հանգիստ,
իսկ կյանքը՝ ոչ:
«Կոյտու և Ռոդրաներ, աղոթեք այնքան,
որքան ուզում եք:
Կտեսներ՝
ինչպես կընթանան գործերը,
երբ բերեն անվասայլակը»:

Լավ օր

Կալա Մորել, ամռանը
ես հազար բառ եմ գրել:
Լողալով անցել հազար մետր:
Կարդացել Սինթիա Օզիք*:
Սափրվել առանց դեմքս վնասելու:
Էլփոստում ոչ մի նամակ՝ ոչ ստացած,
ոչ ուղարկված:
Մարմինս ու գլուխս հանգիստ լռում եմ, ու
ես դեռ կարողանում եմ տարբերել թռչունների երգը
ծվլոցից, երբ նրանք թռչում են ձյուղից:
Նրա ինքնաթիռը ժամանեց ժամանակին:
Գիշերը աստղային ատլասը տպվել է մեր ծնկներին՝
այն ուրախությամբ, որ մեզ չի պատկանում,
բայց մերն է,
մենք երկնքում հայտնաբերեցինք հնագույն
մի համաստեղություն:

* Սինթիա Օզիք (ծնվ. սպրիլի 17, 1928թ.) – ամերիկացի վիպասան և էսսեիստ

Մեծարանք բաս նվագողին

Ոչ նետ, ոչ աղեղ. մարտերից ամենաազնիվը
ձեռնամարտն է:

Մինգուն¹ ասել է, որ իրեն շնից էլ ցածր են
գնահատել.

կասկածամիտ, համեստ, զուսպ, երկրորդ կարգի:
Բայց հավատացեք, որ բաս նվագողն իր կյանքը
կտա բոլորի համար:

Նայեք բաս երաժիշտ Վարշավա Գետտոյին՝
գետնի վրա կավիճով ուրվագծված նրա դիակին:
Մինգունն ասել է, որ նվագել սովորել է առանց
գործիքն իր պատյանից հանելու.

«Երբ գործիքը հանում ես, դառնում է
մանկական երաժշտություն»:

Աստվածահայտնություն. աղջիկը հեծանիվ է քշում,
բասը՝ մեջքին:

Հունական ջնար² պատրաստողները այժմ
Սիզիփոսի բասեր են պատրաստում,
դա հիշեցում է այն բեռների մասին, որոնք կրում ենք
մեր մեջքին:

Ոտքով շրջող բաս երաժիշտը երբեք մենակ
չի քայլում:

Բասը միակ գործիքն է, որը գիտե՝
ինչպես քայլել կրունկների վրա,

ոչ թե ապրել ցատկոտելով դաշնամուրի պես,
ցանկացածի հետ անկողին նետվել

շաբաթ երեկոյան:

«Արի, արի ինձ հետ,- կանչում է բասը դաշնամուրին,-
ես քեզ ցույց կտամ խոցված վերքերը,
հոգու կոյուղիներն ու լքված գործարանների ժանգը,
կախված հագուստի խոնավ չորությունը,

բարձրավոլտ լարերի ցնցումը,

դառը խնձորի գինի մատուցող կաբարեները,

ոչ թե շամպայն մատուցող

վայրերը, որտեղ նույնիսկ ծափող ջույններից

մեզի հոտ է գալիս:

Արի ինձ հետ, համտեսիր դառը իրականությունը

և մեկընդմիշտ հասկացիր՝ կյանքը քեզ այնքան

շատ հնարավորություն

չի տալիս, որքան բանալիները:

Նույնիսկ չորս լարը շատ է. մեկը բավական է

կախվելու համար»:

1. Չարլզ Մինգուս(1922 – 1979թթ.) - ամերիկացի ջազ բաս կիթա-
նահար, կոմպոզիտոր, դաշնակահար

2. ջնար - քնարի նման երաժշտական հին գործիք

Նախագագացում

Ի՛նչ թեթևացում:

Դու ծառ ես

ու չես կարող հետևել ինձ:

Ֆելիքս Ֆրանցիսկո Կազանովա¹,

եթե ծառից ընկնող պտուղը

ժամանակ ունենար հրաժեշտ տալ ծառին՝

իր բոլոր կենսական օրգաններով հանդերձ,

ամեն ինչ այլ կերպ կլիներ:

Ով արժանի կլինի բացատրության,

կստանա:

Երանի մարդիկ գրկեին իրար, և մենք էլ՝ իրար,

մեր ընկերներին ու թշնամիներին,

գրկեինք ամուր՝ սեղմելով ուսերն ու պարանոցը:

Նայիր ժամացույցին և խորը շնչիր, ժամանակն է:

Ահա ինչպես են սկսում ձախողվել

պատմությունները բոլոր:

Անհայտ մի բնակարանում,

ինչ-որ մեկը գգրոցներում

դավաձանության մասին նամակ է փնտրում:

Զբավարարվելով՝ նա նկարներն է շրջում դեպի պատը,

փչացնում բանալու անցքերը,

քաշում վարագույրները, որ տեսնող չլինի:

Ամեն ինչ շատ հանգիստ է, քեզ տեսնում են միայն

ուրվականների քարտուղարները:

Այժմ դու գիտես՝

ինչ պետք է անես:

Դու կանխատեսում ես, թե ինչ կլինի
և դուրս ես գալիս աշխարհի խաչմերուկից,
որ քեզ հետ կապված նախազգացումը
չիրականանա:

Վերևում գտնվող ինքնաթիռը սպիտակ ծխով գրում է.
ԱՊԱՇԽԱՐԵԼ ԱՊԱՇԽԱՐԵԼ ԱՊԱՇԽԱՐԵԼ
Ապաշխարել՝ ինչի համար:
Քար լռություն:

Դու քաշում ես վարագույրները: Ջարմանում ես՝
մի՞թե ստվերները կարելի է ձանաչել դրսից:
Դու չես ուզում մոտենալ պատուհանին,
Գերի Կուպերի² պես
գլխարկդ պահում ես ատրձանակի ծայրին
այնպես, իբր թե ծածուկ նայում ես ժայռերի ետևից:
Նրանք կխաբվեն:
Կարծում ես՝ նրանք կկրակեն գլխարկի վրա:
Շատ միամիտն ես: Դու չես խաբի
նետաձիգին մնան էժանագին հնարքով:
Իրականում նա Նավահո³ է, ով չի վրիպում:
Մուգ մազերով մի աղջիկ զանգը հնչեցնում է, և դու
արդեն պատրաստ ես ծվեն-ծվեն անել
տասը տարվա հավատարմությունը: Ի՞նչ պատահեց
այն ժամանակ,
երբ կարող էիր ցավալի ձշմարտություններ ասել,
բնականաբար: «Խոհանոցում չէ,- ասում ես,-
գնանք մնջասենյակ՝ աշխարհի և հայելիների
խաչմերուկից հեռու»:
Եթե պահվեր անկման հետ կապված փոքրագույն
հիշողությունը,

Եթե պտուղները ձյուղերից այդքան շուտ չընկնեին,
նրանց նայելով, հավանաբար,
տիեզերագիտության մեջ
կհայտնաբերեինք ավելի լավ համաստեղություններ՝
խնձորներից և «մայր ու ձագերից» ձևավորված
Բազումք⁴, Փոքր արջ
և Հարդագողի այլ ձանապարհներ.
վերջապես,
մեր աշխարհում կողմնորոշման համար
մի վայր գտանք:
Դուք հանում եք մեկդ մյուսի շորերը
և զբաղվում սիրով
առանց որևիցե բառի:
Սիրուհուդ թողնելու 50 եղանակ կա՝
գրամոֆոնի միջոցով
կամ այլ երգերով, որոնց համար
ստիպված չես լինել վճարելու:
Նա ծառ չէ, այդ իսկ պատճառով
նա հետապնդում է քեզ:

1. Ֆելիքս Ֆրանցիսկո Կազանովա(1956-1976թթ.) – իսպանացի բանաստեղծ, ոտքեր և գրող

2. Գերի Կուպեր (իսկական անունը՝ Ֆրանկ Ջեյմս Կուպեր(1901-1961թթ.)) – ամերիկացի դերասան

3. Նավահո(ինքնանվանումը՝ դենե, դինե) – Հնդկացիական ցեղ, որ հիմնականում բնակվում է ԱՄՆ-ի տարածքում: Նավահո ցեղի լեզուն աթաբասկյան լեզվաընտանիքից է:

4. Բազումք(բույլք, պլեադներ) – Արեգակնային համակարգին մոտ բաց աստղակույտերից մեկը, հեռավորությունը՝ շուրջ 130 պս, տրամագիծը՝ 10 պս-ից քիչ ավելի:

Դեկտեմբերին, մինչև ոսկորները սառած

Հանդիպում: Կասեիր այստեղ՝
այս դատարկ էջում:
Կարծում եմ՝ հենց այսպես էլ
դու մտածում էիր,
երբ սպասում էիր:

Միայնակ մարդիկ հավաքվում են կամրջի վրա՝
խմելու
այն նեկտարը, որ պետք է խմեին միասին:

Երկիրը շարժվում է. երևակայենք, որ դա մետրո է:
Կամ՝ ստորգետնյա տարածքում ձիարշավներ են
տեղի ունենում:

Սառնարանի դարակներում տեղադրված են
թավջութակներ, այլ ոչ թե սովորական ձիու միս:
Երկու մասի բաժանված սեղանի սփռոցը
մի պառակտված վայրկյանի
օդ է բարձրանում՝ պարելու:

Սուրբ Ծնունդ է: Փափուկ արջուկները
խառնված մոշի խանութի ցուցափեղկերում
օգնություն են խնդրում:

Վաղը առագաստանավը կխորտակվի
ձակատագրերի պատկերասրահում, բայց՝ ոչինչ:

Հարկայծ ԿԱՆՈ

Բերանիցս դուրս եկող գոլորշին ու սառցագնդերը
կառչել են իմ օրերի ձերմակ մազերից:
Մի եզակի հիշողություն, մի մանրուք,
մեզ չեն թողնում մոռանանք,
որ փողոցով քայլելն ու երջանիկ լինելը
նույնն են:

Դաշնակահարը կամրջի վրա

Վրա է հասել ձմռան մահը: Սպիտակ, սպիտակ են
դարձել կամուրջն ու
սառած բազրիքի վրա թափված ձյուղերը:
Դաշնակահարը կամրջի մեջտեղում հանում է
ձեռնոցներն ու
հայացքը հառում գետին:
Կամուրջը նրա դաշնամուրն է: Կամուրջը հաճենում է
նրա շոյանքից:
Մատները դնելով եզրապատին՝ դաշնակահարն
սառնց դաշնամուրի
դաշնամուր է նվագում անձայն՝
լույս քեզ համար:
Ձյան փաթիլները պարզևն են նրա:
Ջոն Քեյջը¹ կծկվել է պատուհանի վրա ու նայում է
կամրջի կողմը՝
անիծելով ձնաբուքը,
մի ձեռքում՝ աստղադիտակը, մյուսում՝
ինքնահոս գրիչը.
լավ տեսողություն ունեցողը միայն կլսի
հաջողության ձայնը:

1. Ջոն Քեյջ - ամերիկացի կոմպոզիտոր, փիլիսոփա, բանաստեղծ, երաժշտագետ, նկարիչ

ENCUENTRA LA MUERTE MIENTRAS
BUSCABA SU ROPA¹

Ահա թե ինչ վերնագիր է ընտրել
իսպանական թերթը՝ որպես գլխագիր:
Մահը նրան գտավ իր հագուստի մեջ:
Ինչպես, ասենք, սենյակն ավլելիս
առաստաղից կախված մի աթոռ
հանկարծ ընկնի, ու մահը վրա հասնի՝
թաքուն, այն սենյակի մահձակալի տակից,
որտեղ աշխատել է Վան Գոգը,
գեր ու փքված ձկան հայացքով
մուտքի դռան անցքից,
կամ՝ դպրոցից, որտեղ
անգիր պահանջել են բոլոր գետերի անվանումները,
անտեղյակ լինելով, որ ժամանակը հալչում-գնում է:
Գաղտագողի՝ փորձելով ինչ-որ բան տեսնել
էկրանի ետևում:
Չհայտնվելով երբեք ատրձանակի թիրախում,
դաշույնի բուրգաձև ծայրին,
ոչ էլ ասեղի անգուսպ անցքի մեջ:

Երբեմն ամեն ինչ շատ պարզ է թվում,
երբ գտնում ես շագանակագույն գուլպայի գույգը:
Նա մահը գտավ իր հագուստի մեջ:
Թույն փնտրելով, ադրենալինի սպասելով,
փոստարկղում կամ լվացքատան գովազդի վրա,

բայց երբեք՝
ինքնասպանության վերջին ցանկության մեջ:
Նա մահը գտավ իր հագուստը փնտրելիս:
Ու հեռացավ մերկ, ինչպես գրեթե միշտ,
նա՝ այդ Պոռնիկը.

1. /խսպան./ «Նա գտավ մահն իր հագուստը փնտրելիս»

Բասկիա¹

Ես ժան Միշել Բասկիան եմ՝
սևամորթ նկարիչ, գաղտնի քվեարկության
ընդդիմադիր ու
արհամարված ն սևերի, ն սպիտակների կողմից:
Ես նա եմ, ով մատը մտցրեց
լավ ձաշակ ունեցողների աչքն ու
շիկահեր երգիչների հետույքը,
նա, ով ներկեց իր տան դռներն ու վարագույրները,
նա, ում ընկերները գողացան ներկած սառնարանը
մահից հետո՝
էժան վաճառելու համար,
նա, ում մահից հետո,
նրա չորս հարյուր ֆունտանոց դուռը գողացան
Երրորդ պողոտայում գտնվող վարպետից,
քանի որ դրա վրա գրաֆիտի ռժով նկարներ կային:
Ես ժան Միշել Բասկիան եմ,
ով սուրճ էր խմում իր կտավների վրա,
ուտում դրանց վրա,
բարկանում, ուրախանում, հուսահատվում,
քնում նրանց վրա,
երբ նրանք ուզում էին հեռանալ,
նա, ով իր կտավների վրա գրել էր ընկերուհիների
հեռախոսահամարները
և ջնջել, երբ բարկացել էր նրանց վրա.
Իրերն արժևորելու և
մարդկանց ուշադրությունը գրավելու
լավագույն և միակ ձանապարհը

դրանք բոլորը ջնջելն է:

Ես Բասկիան եմ,

ով բռնցքամարտեց Ուորհոլի² հետ և հաղթեց:

Ես նա եմ:

Նա, ով սիրով է զբաղվել բոլոր, այսպես կոչված,
մոդայիկ սպիտակ աղջիկների հետ

Նյու Յորքի կենտրոնում,

նա, ով նույն գնով վաճառում էր երկու շաբաթվա
կամ տասը վայրկյանի ընթացքում նկարած

նկարները,

որովհետև իր ամբողջ կյանքը գտնվում էր

այդ տասը վայրկյանի համար դողացող ձեռքում:

Ես Բասկիան եմ.

խնդրահարույց երեխա,

ռաստա ոձի մազերով երիտասարդ,

ով ցանկանում էր ապրել

լիարժեք կյանքով

միամիտ

ամբողջությամբ տարված շուկայով

սիրված

անտանելի

խոր

մակերեսային

բնական

արհեստական

ինչպես ուզում ես հիմա, երբ արդեն մեռած եմ:

Ես նա եմ,

ով քնում էր Վաշինգտոնի հրապարակում

երբ կոտրվում էր կամ

երբ կազմակերպիչը չէր հայտնվում,

ով երկու անգամ նկարահանվել է հեռուստացույցով
և երկու անգամ ստացել «գրամոֆոն» ու դարձել
գող

չարագործ

հրեշտակ

թագադրված թագավոր

անհաջողության մայր և տատիկ

հաջողության որդի և ռաստա ոձի մազերով ծոռ:

Նա, ով բերանը բան խցկած երեխայի տխրությամբ

մաքրազարդվում է իր իսկ աչքերի խորության մեջ,

և, իհարկե, նա, ով մահացել է չափից ավելի մեծ

դոզա ընդունելուց,

քսանյոթ տարեկանում:

Նա, ով ուզում է ձեռքը մեկնել գետնի տակից և

վերջին վրձնահարվածով նկարել

իր գերեզմանաքարի վրա,

բայց անկարող է

նույնիսկ գրի առնել կամ ջնջել

վերջին հեռախոսահամարը:

Նա, ով հանգչած է

Բրուքլինի գերեզմանատանը

և գտնվում է իր բոլոր նկարներում:

Ես Բասկիան եմ:

1. Ժան Միշել Բասկիա(1960-1988) - ամերիկացի նկարիչ: Նյու
Յորքում, նախ, հայտնի է դարձել որպես գրաֆիտի-նկարիչ, ապա,
1980-ական թվականներին, հայտնի է դարձել որպես նոր էքսպրեսի-
ոնիզմի շատ հաջող ներկայացուցիչ:

2. Էնդի Ուորհոլ(1928-1987)- ամերիկացի նկարիչ, պրոդյուսեր, դի-
զայներ, գրող, կոլեկցիոներ, պոպ-արվեստի առաջնորդներից և այս
ուղղության ամենից ձանաչված ներկայացուցիչներից մեկը, «homo
universale» գաղափարախոսության հիմնադիրը:

Եթե երբևէ ստիպված լինեի վաճառել
այն տունը, որն իմը չէ

Ես կասեի՝ այն ունի տասը քառակուսի մետր
երկարությամբ պատուհան,
տասը քառակուսի մետր երկարությամբ ջինջ,
կապույտ երկինք՝
ամեն կողմից երևացող,
այն ոչ մեկի մոտ ցանկություն չի առաջացնի
վերցնել պտուտակահանը և պոկել պատուհանները
պատից
ու դնել հատակին
և մտնել այդ տասը քառակուսի մետրանոց
չժանգոտվող կապույտ երկինքը:
Եվ ինչպես բանաստեղծն ասել էր տարիներ առաջ՝
երկինքը կապույտ չէ, երկինքը
նույնիսկ
երկինք չէ:

Վերջին հրատապ լուրերը

Նորությունները կսկսվեն ժամը իննին,
քահանան իր աչքերը կբարձրացնի քրքրված
Աստվածաշնչից,
ժամացույցի ձոձանակը
կշարունակի իր հետագծով հասնել

գագաթնակետերին:

Համեստ արտահայտությունները կընդհատվեն՝
խեղդվելով լուրյան ձեռքով:

Դանակը կների ափսեի մսին մի պահ,
հարյուրավոր խոհանոցներում
հարյուրավոր գդալներ
կքարանան բերանի շեմին,
երբ բակելիտով¹ սինթեզված մեղվի ձայնը

կհայտարարի.

«Ըստ վերջին լուրերի,
բոլոր կրակոցներն ուղղված էին ուղիղ ձակատին»:

Այնուհետև գդալը կշարունակի մտնել բերանը,
նույնիսկ եթե ապուրը սառած լինի,
Աստվածաշունչը կրկին կթոթափի
աչքերի մեջ գտնվող վախկոտությունը,
ձոձանակը կընկնի անդունդ՝

ինչպես ինքնասպանվող սկայդայվինգի² մարզիկը:
Գուցե ինչ-որ մեկը կշոշափի վերնաշապիկի գրպանը
– մի տուփ ծխախոտը այլուրեքություն է –
և այնտեղ միայն սրտի թույլ բաբախյուն կզգա:

Դանակը նրբորեն կքերծի ափսեմ,
երբ անխափան շարժումներով
կկտրի միսը՝
իրոք ցավեցնելով նրան:

Սավանները կփռվեն վերջապես
այն անկյունագծի ուղղությամբ միայն,
ուր կհրամայի դանակը:

1. քակելիտ - անվանվել է ի պատիվ ամերիկացի քիմիկոս և գյուտարար Լեո Բեկլենդի

2. պարաշուտային սպորտ, պարաշուտինգ, սկայդայվինգ - ավիացիոն սպորտի ձև: Ընդգրկում է թռչող տարբեր ապարատներից (ինքնաթիռ, ուղղաթիռ, պլաներ, դիրիժաբլ, օդապարիկ) վայրէջք՝ պարաշյուտով: Պարաշուտային սպորտը սկզբնավորվել է 20-րդ դարի 20-30-ական թվականներին:

Ճկուն ժամանակ

Ժամանակն ավելի դանդաղ է ընթանում
օտար քաղաքում.
ուստի և՛ փախուստ, ոչ գոհացնող
ավիաընկերություններ
և հոգնածություն թռիչքներից
- հանկարծ առնում ես ինչ-որ արտառոց տիպի հոտ -
ուստի և՛ քարտեզները գլխիվայր կարդալու միտում:

Ժամանակն ավելի դանդաղ է ընթանում
օտար տներում.
ուստի և՛ հյուրանոցներ, և այցելություններ,
և հմայք սպասասարահներում,
և շտապօգնության սպիտակ մեքենան
հրշեջ մեքենայից՝
իրենց ազդանշաններով արագ տարբերելու
անհագ ցանկություն:

Ժամանակն ավելի դանդաղ է ընթանում
օտար մարմիններում.
ուստի և՛ սիրեկանի փնտրտուք թռիչքների
հետաձգումների ժամանակ,
և վերքեր, քանզի վերքերը ժամանակի հետ
դանդաղ են լավանում:

Որովհետև ցավը կեղծ հավերժության
կեղծ խոստումն է:

Բոլոր հետախուզությունները՝
ռազմական գլխարկներով կամ արջի կաշվի մեջ,
ձիով, լեռներում, բաց երկնքի տակ կամ ծովով,
ամենօրյա հերոսական գործողությունները
– Սքոթ, Շեքսպոն, կապիտան Դյուվուազեն –
միթե ժամացույցը կանգնեցնելու խղճուկ փորձեր չեն՝
միաժամանակ խաղաղույթ կատարելով
ժամանակի վրա:

Քանզի ժամանակն ավելի դանդաղ է ընթանում,
քան ձյունը հեռացվում է,
քան կացին-մաչետաներով ջունգլիներում
մաքրում են մորենիները:

Իսկ ծանոթ ձանապարհների վրա
ժամանակը թռչում է:

Ավելի դանդաղ ժայռերի վրա, քան հարթավայրում:
Ավելի դանդաղ անտառում, քան անվտանգ
ձանապարհին:

Թափառաշրջիկը միշտ հաշվի է առնում
անտառն ու մշուշը:

Նա կգերադասեր ժամանակը կորցնել անտառում,
քան իրեն՝ ժամանակի մեջ կամ՝
կորսված չլինել ժամանակի կողմից:

Հավանաբար ասվել էր.

ոչ ոք դեռ չի կարողացել ձկունորեն տիրել

Ժամանակին:

Մենք ընդամենը ժամանակի շղթայի օղակներ ենք.

երեխաներ ենք ունենում անտառում և պատմում

մանկական պատմություններ՝

այնտեղ կորսված:

Ահա այն գինը, որ վճարում ենք -

Ժամանակն ընթանում է անշտապ,

երբ դու կորսվում ես:

Փաթեթավորում

Գարեջրի վախճան ավարտվեց. թղթե անձեռոցիկները
սպիտակ վարդերի տեսք չունեն արդեն

կեղտոտ բաժակների մեջ:

Դատարկ բենահարթակ, դատարկ աթոռներ:

Դատարկ սիճու:

Ոչ այնքան դատարկ, որքան ստամոքսը: Տեղն այժմ
ավելի փոքր է թվում,

մատուցողը փողն է հաշվում առանց մի կում

բան խմելու:

Մենք հավաքում ենք գետնին թափված իրերը.

լարերն այնպես էինք հանում,

կարծես ինչ-որ մեկը քաշեր սատկած վագրի պոչից:

Վերջին ձանձրալի տպավորությունը հաղթում է

փրփուր-ծափերին:

Գարեջրատան տերը հորանջում է, ով ժլատ է

գովեստի մեջ:

Մի՞թե այդքան հուսահատվում ենք սիրո պակասից:

Լավ չխաղացի՞նք:

Միայն մենք գիտենք, ոչ մեկին դա չի հուզում:

Մենք մեր վերքերը լիզող թափառական շներ ենք:

Կարձ մազերով ու երկար ոտքերով աղջիկն

անկողնու մեջ է մինչև հիմա՝

գրկախառնված այն տգետի հետ, որի հետ եկել էր:

Աղջիկն արթուն է դեռ, որովհետև մտածում է

քո մապին,

ու սպասում քեզ՝ միամիտիդ, մինչև որ մտնես
սավանի տակ:
Թեև քո մահձակալը հազարավոր կիլոմետրերով
հեռու է նրա մահձակալից:
Այս վայրը մեկ այլ վայրի ու ժամանակի մասին
խորհել է տալիս:
Գուցե պատճառն այն է, որ բոլոր թատրոններում
վթարային ելքով ելնում ես
դեպի նույն հուսահատությունը.
«Մենք նախկինում երբևէ եղե՞լ ենք այստեղ, Չարիզ»:
«Ոչ, այս երեկո առաջին անգամն է»:
Եվ դա կարող է լինել վերջինը, ո՞վ գիտի:
Մաքրուհին ավելը ձեռքին սպասում է,
որ մենք դուրս գանք:
Դրսում անձրև է: Մենք փակում ենք
ծանուցատետրերը, հնաշորով սրբում ամեն ինչ,
փակում դրամարկղերը, և վերջ, օրն ավարտված է:

Մեր քայլերը տարօրինակ են, քաղաքը՝ օտար:

Ամեն ինչ կփակվի հիմա, նույնիսկ փոքր իսկ
խայթոցի տեղ չի մնա:
Ամեն ինչ, քո վերքերից բացի:

Խնջույքից հեռանալը

Փորձիր չլուսանկարվել:

Եթե չես կարող, կանգնիր ետևի շարքում:

Եթե չես կարող, լուսանկարչին ասա՝ թող միշտ
քեզ քո տարիքից ավելի մեծ տեսքով հանի:

Տես, որ ժամանակն իզուր չի անցնում,
գուցե և՛ դժբախտաբար:

Իմացիր, որ քո նկարները քուքիներում
միշտ գանձ կլինեն ուրիշների համար,
բայց ոչ քեզ համար:

Նայիր ձկան կարթին, նայիր աչքերին.
դրանք նույն բաներն են:

Նայիր արյան հետքին.
քո աչքը խայծ կդառնա հաջորդ անգամ –
քո փորոտիքը, քո ապաշխարությունը:

Լսիր և մի՛ մոռացիր՝ երջանկությունը
լավագույն վրեժն է:

Կանգնիր ընկձախտի սև շան դեմ, նայիր նրա
սև աչքերի մեջ ու ասա.

Հարկայծ ԿԱՆՈ

«Իմացի՛ր, սև շուն, իմ շների աչքերն ավելի սև են»:
Շարունակիր ձեռքդ թափահարել իբրև հրաժեշտ,
 խնդրում եմ քեզ
բոլոր այն կանանց անունից, ովքեր երբեք չէին
կշտանում քո մահձակալից:

Մի՛ մերժիր խնջույքի հրավերը լոկ այն պատճառով,
որ դու նյարդայնացած ես կազմակերպչի վրա:

Լսիր ու հիշի՛ր. եղի՛ր մեծահոգի,
երբեք վերջինը մի՛ լքիր խնջույքը:

Ինչ-որ մեկի համար միշտ հաջորդ օրն է

Ինչ-որ մեկի համար միշտ հաջորդ օրն է:

Post coitum¹, post celebration blues², post data³.

Այսօրվա արևածագը երեկվանը չէ:

Կգտնվի մեկը, որ հյուրեր չի ընդունում:

Այսօրվա խնջույքից հետո օրը կամփոփագրենք:

Դատարկ շշեր, հալչած սառցակտորներ,

որոնք ջուր չեն դառնում:

Թռչունների ծվլոց դրսում՝ խոհանոցում եռման

ձայնի տեղակ -

թերևս ծիծեռնակների, կամ փոքրիկ թռչունների

անձայն երգերը

ընդգծում են քո մենուօրյան ծավալը:

Սպիտակ անձեռոցիկների գերիներն են շրթներկն ու

սուրճի մնացորդները:

Մոռացված ձեռքի ժամացույցները, մատանիներն ու

կեղտոտ ափսեները

դժվար է մաքրել, քանի որ դրանք չեն մնացել

ներծծվելու անցած գիշեր:

Վտանգավոր խոսակցությունը մեղմանում է,

ժպիտները՝ մարում:

Շրջված գավաթներ, ժապավեններ:

Կոտրված բռնակով բաժակի աղետ.

- ափսոս է դեն նետելը -

այն դրդում է քեզ մաքրել հյուրի տաբատը:

Միակ ծխախոտի ծուխն ավելացնում է

քո կնձիռները:

Եվ ամենակարևորը՝ թվաբանական վարժություն՝
այն ամենից, ինչ ուզում էիր ասել, բայց չասացիր,
հանիր այն ամենը, ինչ չէիր ուզում ասել,

բայց ասացիր.

ու աղոթիր դրանց դրական

ներդաշնակության համար:

1. post coitum(լատ.) – Նշանակում է սեքսից հետո օրեր: Տերմին է, որը սովորաբար օգտագործվում է բժշկության և կենսաբանության մեջ սաղմի տարիքը նշելու համար:

2. post celebration blues(լատ.) – բլյուզի հետ տոնական օր

3. post data(լատ.) – հետին ամսաթիվ

Իսկ ի՞նչ թռչուն

Մենք կարող էինք թռչուններ լինել,
իսկ ի՞նչ թռչուն՝
արծիվ, կաչաղակ, մանգաղաթև, թե ծիծեռնակ:
Մեր թռիչքը
վեր ու վար կտատանվեր ուղեծրում:
Կանցնեի՞նք այնպիսի վայրերի վրայով, որ
կուզենայինք մի շնչով առուներ խմել
փոքրիկ կտուցով:
Ձագերին ուտելու բան տվեք,
ընդմիջում արեք հարցերի համար,
մատնանշեք վտանգները՝ Սա, Այն, Մյուսը...
Երբ դա արվի, մեր գործն էլ կավարտվի:

Երեկ երեկոյան հուղարկավորությունից հետո.
գարեջրից հետո դառնացած գլխով
տաձարից դուրս եկա և եկեղեցու մոտ գտնվող
սրձարանում
շարունակեցի խմել՝ ձանկերով ամուր
բռնելով կյանքից,
հանց ծեր թութակ՝ իր ճոճվող թառին:

Դեռ չհասած հեռավոր կղզին,
արդեն ցնցվում ես մոտակայքի ցեխից:
Հրաժարվելով ոսկուց, ինչևիցե,
Կամենում ես արծաթ:

Կարձ տարածություն, կամավոր գնչու,
անորակ ասֆալտ, վերևից պահանջվող երամ,
թաց փետուր, թռիչքի անորոշ ուղի:
Հյուսիսը փոքրանալու ձանապարհ է:
Համաձայնվելը, որ դու ձիշտ ես՝ կարծում ես
իմ ոճով է: Մարսուտ:
Ես խոստովանում եմ՝ գուցե այդպես է.
Եթե ուզեինք թռչուններ լինել, թռչուններ կլինեինք:

Լռելու 15 պատճառ

Որովհետև ասելիք չունեն:

Որովհետև չնայած շատ բան ունեն ասելու,

դու ուշադրություն չես դարձնում:

Որովհետև նախընտրում եմ լսել քո ասածը:

Որպեսզի ինքս ինձ չխոսեմ:

Որպեսզի պատի հետ չխոսեմ:

Որպեսզի չխոսեմ պատի ձեռքի հետ:

Որպեսզի չարթնացնեմ պատի ձեռքում

ապրող ծղրիդին:

Որովհետև շուրթերս մեղրով կնքված եմ:

Որովհետև ես համբուրում եմ քեզ:

Որովհետև ես նեղացած եմ:

Որովհետև ես նեղացած եմ և համբուրում եմ քեզ:

Որովհետև ես սիրում եմ լռել:

Որովհետև մեր շունչն ինքնին խոսում է:

Որովհետև ես բառերից ավելի մեծ

գաղտնիք եմ պահում:

Որովհետև սիրտս բերանումս է:

Գոռալու 15 պատճառ

Որովհետև դու երկար ժամանակ է՝ չես գոռացել:

Համոզվելու համար, որ բոլոր ձայնավորները

դեռ գտնվում են իրենց տեղերում:

Որովհետև դու մենակ ես և, հուսակտուր,

արձագանքի կարիք ունես:

Գոթական տաճարի բարձրությունը չափելու համար:

Իտալացի հեծանվորդին ուրախացնելու համար:

Դժգոհ մկնիկին քշելու համար:

Որ քեզ լսեն թատրոնի դահլիճի վերջին շարքից:

Որ քեզ լսեն գետակի մյուս կողմից:

Որ ցանցն ընկած ձկները քեզ լսեն:

Որ երբ մինչև պարանոցդ ջրի մեջ լինես,

կանչես փրկարարին:

Անհատակ ջրհորի խորությունը չափելու համար:

Գայլերին ծննդյանդ տոնին հրավիրելու համար:

Որպեսզի բոլորն իմանան, որ գոռալն

այնքան էլ հեշտ չէ:

Քանզի ոմանք չեն կարողանում գոռալ:

Որ անտառները սովորեն քո անունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնադիմանկար	5
12 հնացած սարդինաձուկ շտապ սպառման համար	7
Սարսուռների մեկնաբան	8
Մարդ մարդկանց մեջ	10
Մարաևո, 1993	12
Նոր կայարան	14
Ծխի ազդանշաններ	15
Տանիքների վրա աշխատող մարդիկ	16
Կոնի կղզու մղձավանջը	18
Մեր կյանքի լավագույն տարիները	20
Փետուրե մահձակալ	21
Գնչուները	22
Փնտրել ու վերափոխել	25
Պատերազմ	26
Լուսամուտների հաշվում	27
Պահը	28
Հանգավոր բանաստեղծություն գիշերվա մասին	31
Մարգարիտը	33
Բարի գալլ	34
Չար գալլ	35
Մարդիկ, որոնց զանգում եմ	36
Կորսված բաներ, գտնված հույսեր	39
Գովասանք հավասարության համար	40
Կյանք վագրի հետ	41

Բասկ գեղասահորդի հիշողությունները	48
Նկատել եք, որ	52
Բաժանում	53
Պարտքեր	58
Ոչինչ չգիտեի	60
Լուռ և Ստենդալով համակված	62
Քիմիաթերապիա	63
Լավ օր	65
Մեծարանք բաս նվագողին	66
Նախագգացում	68
Դեկտեմբերին, մինչև ոսկորները սառած	71
Դաշնակահարը կամրջի վրա	73
ENCUENTRA LA MUERTE MIENTRAS	
BUSCABA SU ROPA	74
Բասկիա	76
Եթե երբևէ ստիպված լինեի վաճառել այն տունը, որն իմը չէ	79
Վերջին հրատապ լուրերը	80
Ճկուն ժամանակ	82
Փաթեթավորում	85
Խնջույքից հեռանալը	87
Ինչ-որ մեկի համար միշտ հաջորդ օրն է	89
Իսկ ի՞նչ թռչուն	91
Լռելու 15 պատձառ	93
Գոռալու 15 պատձառ	94

Հարկայծ ԿԱՆՈ

ԲԱՐԻ ԳԱՅԼ, ՉԱՐ ԳԱՅԼ
Բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Քրիստինե ՔՈՉԱՐՅԱՆԻ

Բասկերենից անգլերեն թարգմանությունը՝
Քրիստին Ադդիսի
Հավելյալ թարգմանությունները կատարեցին
Ջասթին Կրամբոն, Նադա Գրոշելը
և Ամայա Գաբանտշոն:

Խմբագիր՝ Հ.Ալեքսանյան
Էջադրումը՝ Թ.Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Գրիգորյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 ^{1/16}:
Ծավալը՝ 6.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500:



Տպագրվել է «Լիլիթ» հրատարակչատանը
Հասցե՝ Երևան, Մայիսի 9 փ., տուն 23
Հեռ.՝ 096 643 653

«Գեղարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել.

- Թատերախաղեր արեւմտյան գրականությունից - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչունը»
(քանաստեղծություններ) - 2011
- Միխայիլ Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի
խնդիրները» - 2012
- «Միրիուսի սրնգահարները» (Վ. Խլերնիկով, Ն. Գումիլյով,
Վ. Խոդասեւիչ), (քանաստեղծություններ) - 2012
- Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը»
(պատմվածքներ) - 2012
- Յուրի Լոտման. «Միֆ. Անուն. Մշակույթ» - 2012
- Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ» - 2012
- Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»
(հեքիաթ-վիպակ) - 2013
- Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
- Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Գ. Պրիգով, Վ. Նեկրասով,
Լ. Ռուբինշտեյն) - 2014
- Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը»
(քանաստեղծություններ) - 2014
- Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր»
(վեպ 2 գրքով) - 2014
- «Կամուրջների խռովությունը. մետաֆորիստներ»
(քանաստեղծությունների անթոլոգիա) - 2015
- Ալեքսանդր Սուլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»
(պատմվածքներ) - 2015
- Անդրեյ Պլատոնով. «Չեւեւգուր. Գուրը.
Պատմվածքներ» - 2015
- Արդի ռուսական վերլիբր (քանաստեղծությունների
անթոլոգիա) - 2015

- Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Զիլի Մաջիա. «Հրեղեն խոսքեր»
(բանաստեղծություններ) - 2015
- Մա Քայ. «Սրտի արձագանքներ»
(բանաստեղծություններ) - 2015
- Եվգենի Վոդյազկին. «Լավր» (վեպ) - 2015
- Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը»
(բանաստեղծություններ) - 2015
- Ռուս ալյախոհական պոեզիա (բանաստեղծությունների
անթոլոգիա) - 2015
- Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատորներ 1-9) - 2016-2021
- Յու Զիան. «Անճրելից պատսպարվող թռչունը»
(բանաստեղծություններ) - 2016
- Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից»
(վավերագրական վեպ) - 2016
- Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին»
(բանաստեղծություններ) - 2016
- Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի
սիրո պատմությունը» - 2016
- Լյուդմիլա Պետրուշենկայա. «Սեր. Երջանկություն.
Ռեքվիեմ» (պատմվածքներ) - 2016
- Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» (վեպ) - 2016
- «Դիկոռուսներ. Անհայտ պոետների ապաստան»
(բանաստեղծությունների անթոլոգիա) - 2016
- Ռուս մինիմալիստներ (բանաստեղծությունների
անթոլոգիա) - 2016
- Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը,
բողոքականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը
եւ չինական մշակույթը» - 2016
- Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» (վեպ) - 2016

- Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Կացարաններ» (ազգագրություն) - 2017
- Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» (պատմվածքներ
եւ բանաստեղծություններ) - 2017
- Ջիդի Մաջիա. «Ընծառյուծից մինչև Մայակովսկի»
(բանաստեղծություններ)- 2017
- Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» (վեպ) - 2017
- Դոնգ Քիանգ. «Թաղում» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Փառատուններ» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» (ազգագրություն) - 2017
- Սյաո Յյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի»
(գրականագիտություն)- 2017
- Ուան Յուոլիան. «Մերձակցության աստիճաններ»
(գրականագիտություն) - 2017
- Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադեւը» (վեպ) - 2018
- Ու Չուն. «Չինական մշակույթ. Փիլիսոփայություն» - 2018
- Մարտիրոս Ռբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» (վիպակ) -2018
- Ս. Ուեյսին, Ճ. Սյուն. «Չինաստանի յուրահատկությունները:
Չինաստանի համաշխարհային ժառանգությունը» - 2018
- «Աղի ձայնը» (20-րդ դարի հետաքստունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) - 2019
- 20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
- Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները»
(բանաստեղծություններ) - 2020
- Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը»
(վավերագրական վեպ) - 2020
- Յերինգ Նորբու. «Փրկված գառը»
(տիբեթյան պատմվածքներ) - 2020
- Չժան Յավեն. «Դարերի կանչը.
Ստորումներ Հոնկոնգի մասին» - 2020

- Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
- Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք»
(բանաստեղծություններ) - 2021
- Էլիզաբեթ Քրիստին Յոկուսդոտիր. «Մեր, նյարդերի
քայքայում. Ոչ մի պար Չուկ-քարի վրա»
(բանաստեղծություններ) - 2021
- Ալեքսեյ Վառլանով. «Մտագայլը» (վեպ) - 2021
- Միխայ Այվազ. «Այլ քաղաք» (վեպ) - 2021
- Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» (վեպ) - 2021
- Խոսեֆա Սարիոնանդիա. «Բանտեր եւ արտորներ»
(բանաստեղծություններ) - 2022
- Չինական ավանդական բժշկության հիմնական
հասկացությունների հանրագիտարան (հատորներ 1-2) - 2022
- Նիկոլա Դուրետիչ. «Մահվան եւ անհետացման
ժամանակագրությունը» (պատմվածքներ) - 2022
- Սլավենկա Դրակովիչ. «Ֆրիդա կամ՝ ցավի մասին»
(վեպ) - 2022
- Սիգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ
սպազայի մասին» (երեք վիպակ) - 2022
- Եվգենի Վոդյազկին. «Կղզու արդարացումը» (վեպ) - 2022
- Թրևոր Չահրա. «Երեկոյան ժամերգություն»
(պատմվածքներ) - 2023
- Լեոնիդ Յուզեֆովիչ. Հելլենասերը
(ոչ պատմական վեպ) - 2023
- Պիեռ Մեյլակ. «Բարի գիշեր մադթելով»
(պատմվածքներ) - 2023
- Էռնեստ Հեմինգուեյ. Դարը պահանջում էր
(բանաստեղծություններ) - 2024



Ոգի-Նաիրի

Vogi-Nairi

www.vogi-nairi.am

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

հեռ.՝ +374 97252323, +374 94259161